Ազգ
AZG
armenian newspaper

Օգոստոս 7. 1991.
Շաբաթաթերթ
եռօրեայ թերթ.
Ա տարի. թիւ 50
գինը 30 կ.

հասցէ՝ Երեւան 375010
Դանիելեանի 47
հեռախօս՝ 581841
ֆաքս՝ 562941
տելեքս՝ 243267 SULA SU

Բուշը մտադիր է նախագահական ընտրություններում երկրորդ անգամ դնել իր թեկնածությունը

Նախագահ Բուշը պատրաստվում է առաջիկա տարին Մ. Նահանգների նախագահական ընտրություններին ներկայանալ, երկրորդ անընդմեջ պաշտպանության համար: Նա այս որոշմանն է հանգել շաբաթ օրը իր քաղաքական խորհրդականների հետ այդ հարցը քննարկելուց հետո: Այդ անդրադառնալ ընթացքում նա խորհրդակցել է նաեւ 1992-ի ընտրապայքարում իր թեկնածությունը դնելու առթիվ դեմոկրատ կուսակցության կողմից սպասվող հարձակմանը դիմակայելու քայլերի շուրջ:

Հաջորդ օրը Ջորջ Բուշը լրագրողներին հայտնել է, թե միայն առողջական հարցերը կարող են իրեն ետ կանգնեցնել 1992 թ. նախագահական ընտրություններին մասնակցելուց: ■

Համագործակցության նոր պայմանագիր

Հայաստան-Միութենական նախարարություն

Երեկ, օգոստոսի 6-ին, ժամը 10-ին Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհրդի եւ ԽՍՀՄ երկրաբանության նախարարության միջեւ կնքվեց պայմանագիր, ըստ որի կմշակվի եւ կիրականացվի Հայաստանի տարածքում հանքահումքային բազայի զարգացման համաձայնեցված ծրագիր՝ հանքային հումքի հետախուզված պաշարների հանրապետական ու ընդհանուր միութենական պահանջմունքներն ապահովելու նպատակով:

Պայմանագիրն ստորագրեցին վարչապետ Վազգեն Մանուկյանն ու ԽՍՀՄ երկրաբանության նախարար Գրիգոր Գաբրիելյանը:

Ըստ պայմանագրի, պետք է կոորդինացվեն հանքային հումքի ռացիոնալ օգտագործման, ընդերքի պահպանության եւ պետական երկրաբանական վերահսկողության գծով աշխատանքները, Հայաստանի կառավարությունը պետք է իրականացնի հանրապետության կարիքների համար անցկացվող երկրաբանահետախուզական աշխատանքների ֆինանսավորումը եւ կենտրոնացված նյութատեխնիկական մատակարարումը: Իր հերթին ԽՍՀՄ երկրաբանության նախարարությունն ապահովում է տարբեր հետազոտությունների գծով ընդհանուր միութենական ծրագրերի մշակումն ու իրականացումը, օգտակար հանածոների հիմնական տեսակների գծով երկրաբանահետախուզական աշխատանքների ֆինանսավորումը եւ կենտրոնացված նյութատեխնիկական մատակարարումը ՀՀ երկրաբանության պետական կոմիտեի ուժերով միութենական ֆոնդի միջոցների հաշվին կատարվող հանրապետության հետ համաձայնեցված նպատակային ծրագրերով:

Պայմանագիրը ներառում է նաեւ համատեղ գործակցության այլ ոլորտներ: Այնուհետեւ տեղի ունեցավ մամլո ասուլիս, որին մասնակցեցին ԽՍՀՄ երկրաբանության նախարար, հայտնի հանքաբան, պրոֆեսոր Գրիգոր Գաբրիելյանցը, ՀՀ երկրաբանության, հանքային եւ ընդերքի պահպանության կոմիտեի նախագահ Ռուդոլֆ Կարապետյանը, փոխվարչապետ Վարդան Ամիրբեկյանը: Միութենական հայազգի նախարարը նշեց, որ արդեն 11 հանրապետությունների հետ կնքվել են նմանատիպ պայմանագրեր, որոնք ի տարբերություն մինչ այդ գործող հարաբերությունների, այժմ ստեղծում են փոխշահավետ պայմաններ եւ հանրապետության, եւ կենտրոնի համար: Այսուհետեւ մեծ տեղ պետք է տրվի նավթի հետազոտման աշխատանքներին: Միութենական նախարարությունը տարեկան շուրջ 30 մլն ռուբլի կհատկացնի, որպեսզի շարունակվեն Հայաստանի մոտ 378 շահագործվող հանքերում տարվող աշխատանքները: Գ. Գաբրիելյանցը նշեց, որ պայմանագիրը հնարավորություն է տալիս հրաժարվելու նախկին կենտրոն-հանրապետություն հրամայական ոճից եւ աջակցելու է միջբանային կապերի լայնացմանը: Պայմանագիրը կենթարկվի ասպիրանտական փոփոխության՝ կազմված այն հարափոփոխ երեւույթների հետ, որոնք կընթանան անկախ հանրապետություններում: «Ազգ»-ի այն հարցին, թե ինչ վախճան կունենա պայմանագիրը, ԽՍՀՄ-ի կենտրոնական իշխանությունների փլուզման դեպքում, նախարար Ռ. Կարապետյանը նշեց. *«Երկրաբանությունը քաղաքական սահմաններ չի ճանաչում: Համագործակցությունը պետք է շարունակել: Միութենական նախարարությունը ֆինանսավորում է համատեղ կազմված ծրագիր՝ տրամադրելով նաեւ անհրաժեշտ նյութատեխնիկական բազա: Եւ եթե առաջ նման առաջադրանքներ կատարելիս մենք «նայում էինք» կենտրոնին, ապա այժմ բավարարելու ենք մեր կարիքները, հետո միայն միութենականը: Հետագայում երեւի թե դա կվերածվի առանձին հանրապետությունների միջեւ կնքված պայմանագրերի»:*

Հ. ՍՍՍՏՐՅՍԼ

Լուսանկարը՝ Ռ. ՍԹՍՅՍԼԻ

ԽՍՀ ներկայացուցիչը չի բացառում Հարավսլավիա օտար զորքեր մտցնելու հարցը

Հաշվի առնելով ոչ միայն Եւրոպայում անվտանգության եւ համագործակցության խորհրդի (ԵԱՀԽ) շրջանակներում պայմանավորվածությունը, այլեւ իր ներքին խնդիրները, Խորհրդային Միությունը օգոստոսի 8-ին Պրագայում բացվելիք ԵԱՀԽ-ի ավագ պաշտոնատար անձանց կոմիտեի նիստում պետք է պաշտպանի Հարավսլավիայի միասնականության եւ տարածքային ամբողջականության սկզբունքները: Այդ մասին հատուկ «ԻՖ»-ին տրված հարցազրույցում հայտնեց այդ կոմիտեում ԽՍՀՄ ներկայացուցիչ Յուրի Դերյաբինը: Կոմիտեն, որ կազմի մեջ են մտնում ԵԱՀԽ-ին անդամակից 35 երկրների ներկայացուցիչներ, գումարվում է երկրորդ անգամ, որպեսզի քննարկի այն բարդ իրադրությունը, որ առաջացել է Լյուքսեմբուրգի, Պորտուգալիայի եւ Հոլանդիայի արտգործնախարարների հարավսլավական ճգնաժամը կարգավորելուն ուղղված առաքելության ձախողումից հետո:

Յու. Դերյաբինը նշեց, որ չի բացառում Հարավսլավիա օտարերկրյա զորքեր մտցնելու հավանականության հարցը: Սակայն դրա համար, ըստ նրա, անհրաժեշտ է «Հարավսլավական բոլոր իշխանությունների» համաձայնությունը (նկատի է առնվում միութենական եւ հանրապետական իշխանությունները):

Խորհրդային Միությունը, հաստատելով դիտանկյունը, պատրաստ է քննարկել հարավսլավական հարցը ԵԱՀԽ-ի շրջանակներում, սակայն կտրականորեն դեմ է այն մտցնել ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդ: Խ. Միությունը ելնում է այն բանից, որ դա չի համապատասխանում ՄԱԿ-ի կանոնադրության որոշ դրույթների եւ դրան դեմ են դուրս գալիս հարավսլավական որոշ ներկայացուցիչներ: ■

Միջին-արեւելյան խաղաղության խորհրդաժողովը հոկտեմբերի՞ն

Խոսելով միջին-արեւելյան իր այցի վերջին հանգրվանը հանդիսացող Այժիից, Մ. Նահանգների պետքարտուղար Ջեյմս Բեյքերը երեկ հայտարարեց, թե Լիբիան նույնպես կարող է իր ներկայացուցչին ուղարկել հոկտեմբերին գումարվելիք խաղաղության խորհրդաժողովին, եւ Իսրայելը հավանաբար չի առարկի դրան, քանի որ, ավելացրեց Բեյքերը, բազմազգ այդ ժողովը չպետք է փակ լինի երրանի երկրներից որեւէ մեկի առաջ:

Նույն օրը պետքարտուղարը բանակցություններ էր ունեցել Այժիի նախագահ Բենջեդիդի հետ, որն իր հերթին կիրակի օրը տեսակցություն էր ունեցել Պաղեստինի ազատագրական կազմակերպության պետ Յասեր Արաֆաթի հետ այն մասին, թե ո՞ր պաղեստինցիները մաս պիտի կազմեն խորհրդաժողովին:

Նույն օրը Իսրայելյան կաբինետը վավերացրել էր վարչապետ Շամիրի որոշումը՝ մասնակցել խաղաղության խորհրդաժողովին, պայմանով, որ «միայն ընդունելի պաղեստինցիները» մասնակցեն դրան:

Իր հերթին, Ջեյմս Բեյքերը խորհուրդ էր տվել պաղեստինյան քաղաքական երրանակներին, որ ներկայացուցչության հարցով չխոչընդոտեն խաղաղության իրական եւ ամենալուրջ խոսակցությունները: Եւ թվում է, որ պաղեստինցիք ընդունել են պետքարտուղարի խորհուրդը: Արդարեւ, Յասեր Արաֆաթի օգնականներից Բասսամ Աբու Շարիֆը երկուշաբթի հայտարարել էր, թե *«միշտ էլ կարելի է մի բանաձեւ գտնել գոհացնելու համար նաեւ պաղեստինցիներին, նաեւ իսրայելցիներին»*, ավելացնելով, որ պաղեստինցիները մասնակցելու են խաղաղության խորհրդաժողովին: ■

Մոլդովա ժամանեց Ռումինիայի վարչապետ Պետրե Ռոմանը

Երեքշաբթի, օգոստոսի 6-ին Քիշնեւ ժամանեց Ռումինիայի վարչապետ Պետրե Ռոմանը: Օդանավակայանում նրան դիմավորեցին Մոլդովայի վարչապետ Վալերի Մուրավսկին եւ այլ պաշտոնատար անձինք:

Մամուլին տրված հայտարարությունում Պ. Ռոմանը հաղորդեց, որ Քիշնեւ է ժամանել Ռումինիայի եւ Մոլդովայի կառավարությունների միջեւ տնտեսական համագործակցության եւ առեւտրական փոխանակումների, ինչպես նաեւ տնտեսական, առեւտրական եւ գիտական համագործակցության հարցերով զբաղվող միջկառավարական հանձնաժողով ստեղծելու վերաբերյալ համաձայնագիր ստորագրելու համար:

«Դա ավելին է... քան սովորական համաձայնագիրը,– հայտարարեց Ռումինիայի վարչապետը: *Մենք պարտավոր ենք նախապատրաստել համագործակցության հիերարգ զարգացման համար բարենպաստ հիմքեր»:*

«Այս համաձայնագրերը պետք է դառնան առաջին ծանրակշիռ ներդրումները փոխշահավետ համագործակցության զարգացման մեջ»,– նշեց Պետրե Ռոմանը:

Այցելության ծրագրով նախատեսվում են հանդիպում Մոլդովայի նախագահ Միրչա Սնեգուրի հետ, փաստաթղթերի ստորագրում եւ մամլո ասուլիսի անցկացում: ■

Լանդսբերգիսը հեռագրում է Գորբաչովին

Օգոստոսի 6-ին Լիտվայի Գերագույն խորհրդի նախագահ Վիտաուտաս Լանդսբերգիսը Գորբաչովին հեռագիր ուղարկեց, որում մասնավորապես ասվում է. *«Հուլիսի 31-ին Մեղինինկայում կատարվել է չլսված նոր հանցագործություն. գլխին կրակոցներից սպանվել են չդիմադրող զերիները, Լիտվական հանրապետության պաշտոնական անձինք: Կենտրոն պատերազմի գործողությունների անընդհատ ծավալումը Լիտվական հանրապետության դեմ կտրուկ աճել է: Պրն. Նախագահ, մենք հիշ ժամանակ ունենք: Օրերը անհաղթահարելի պետք է դուրս բերվի: Մեզ անհրաժեշտ է հանդիպել: Սիաբենկիչները կշարունակեն սպանությունները, իրադարձությունները կլուսաբանեն անկախ նախատեսելի: Ես չեմ կարող խոսքս, որ դուք դա ցանկանում եք»:* ■

Մոսկվա-Բաքու գնացքի պայթյունի երեք վարկած

ԽՍՀՄ ՆԳՆ հասարակական կապերի կենտրոնի պետ Անդրեյ Զեռենկոն մամուլի ասուլիսում հայտնեց հուլիսի 31-ին Մոսկվա-Բաքու գնացքում տեղի ունեցած պայթյունի, որի պատճառով զոհվել է 15 եւ վիրավորվել 20 ուղեւոր, հետաքննության ընթացքի մասին:

Նրա ասելով, 14 ուղեւոր արդեն ճանաչվել են: Երեք վարկած է մշակվում. ահաբեկչություն՝ ազգային հողի վրա, ուղեւորներից մեկի նկատմամբ վրեժխնդրություն, պայթուցիկ նյութերի հետ անզգույշ վերաբերմունք:

digitised by A.R.A.R.@

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

Եւրոպական համայնքի խաղաղարար ջանքերը ձախողվում են Խորվաթիայում: Հոլանդիայի արտգործնախարար Վան դեն Բրուքը, որ գլխավորում է եւրոպական պատվիրակությունը երկու օր շարունակ Հարավսլավիայի ղեկավարների հետ հանդիպումներ ունենում, խաղաղարար քայլերի ձախողման համար մեղադրեց Սերբիային: Ներկայացուցիչների կարծիքով, ներկա ընթացքով Հարավսլավիային սպառնում է «ողբերգություն եւ աղետ»: Երեկ Սերբիան եւ Խորվաթիան իրար մեղադրեցին եւրոպական խաղաղարար առաքելությունը ձախողելու հանցանքով: Խորվաթիայի նախագահ Տուժմանը հայտարարեց, թե ինքը կդիմի իր հանրապետության քաղաքացիներին, որ մինչեւ վերջ կռվեն, նույնիսկ իրենց «մերկ ձեռքերով»: Նա հայտնեց նաեւ, թե վերջերս իրեն հաջողվել է զսպել իր կուսակցության «Խորվաթական ռազմավարական միության» ներսում իր դեմ եղած ընդոստական շարժումը:

Հունական «Օլեանոս» նավը նախանցյալ օր ընկղմվեց Հարավ-Աֆրիկյան ափամերձ ջրերում: Օգնության հասած ուղղաթիռներով ու նավերով հաջողվեց փրկել ավելի քան 500 հոգու կյանքը: Սակայն 7 մարդ անհետ կորել են: Պրետորիայի տրանսպորտի նախարարը հայտարարեց, թե իր կառավարությունը հետաքննություն է կատարելու այն մասին, որ ընկղմված նավն արդյո՞ք ռմբահարման սպառնալիք էր ստացել նախապես: Երեկ ուշ գիշերին իմացանք, որ նավի բոլոր ուղեւորները էլ փրկվել են: Սակայն ուղեւորները խստորեն բողոքել են նավապետի դեմ, որ փոքրկոս ծովում խորտակվող նավից հեռացել է ուղեւորներից առաջ:

Արեւելյան Ջիմբաբվեում շաբաթ օրը վերջի ենթարկված դպրոցական ավտոբուսում 80 աշակերտներ եւ 7 մեծահասակներ զոհվեցին: Ոստիկանության հաղորդած տվյալներով, ավտոբուսի վարորդը լեռնային ճանապարհի վրա մեծ արագությամբ սուրալով կորցրել էր ուղղությունը:

Ամերիկյան սենատը վավերացրեց Սդիտակ տան 291 միլիարդ դոլարի ռազմական հատկացումների պահանջը: Այդ փաթեթի մեջ մտնում են 3,2 միլիարդ՝ Բի-2 «Սպրիթ» ռմբակոծիչների արտադրությունը, 4.6 միլիարդի հակահրթիռային ծրագրերի արագացումը եւ բազմաթիվ ուրիշ պահանջներ:

Մ. Նահանգներում, եթե ոճրագործությունների քանակի կտրուկ փոփոխություն տեղի չունենան, ըստ ոստիկանության, զոհերի թիվը մինչեւ տարեվերջ կհասնի 23700-ի:

Իրանը տեղեկացրեց ՄԱԿ-ի պատվիրակությանը, թե գաղտնորեն արտադրել է փոքր քանակությամբ պլուտոնիում, սակայն միջուկային զենքի համար պետք եղածի ընդամենը մի մասը: Բաղդադը միջազգային ինսպեկտորների խմբին հայտնեց նաեւ, որ 1986-90 թթ. առաջ է տարել կենսաբանական հետազոտություններ պատերազմական նպատակներով, սակայն հետագայում ոչնչացրել է բոլոր արտադրանքները: ■

Հարկավոր է ապացուցել, թե ինչի՞ ենք մենք ընդունակ

Յ. Ցվեյանայի Պասկալեւային, բուլղարացի խիզախ լրագրողի հետ հանդիպեցի տղաների գերեզմանին՝ Եռաբլրում, որտեղ հեկեկանքը մի կերպ զսպելով, արցունքախառն այտերով նկարահանում էր: Նա տղաներին գիտեր Շահումյանից. միասին են կիսել դժվար օրերը: Նրա արցունքներից ես հասկացա, որ նա իմ հարազատն է, ամենահարազատը: Վրստահ եմ, որ հուզմունքի այդ պահը, համենայն դեպս, կանացի թուլության նշան չէր: Հասկացա, որ նրա մեջ կա վրեժ եւ ձգտում՝ ժամարտության իր խոսքն ասելու: Նա երբեք իր գենքերը վայր չի դնի եւ չի հուսահատվի: Շահումյանում Յվեյանայի արած տեսագրությունները ադեն ցուցադրվել են արտասահմանյան եւ միութենական որոշ հեռուստակայաններով: Շահումյանից վերադառնալուց հետո, նա վերջերս Մոսկվայում հայկական ներկայացուցչությունում կազմակերպել է մամլո ասուլիս, որին ներկա են զսնվել մամուլի ներկայացուցիչներ եւ աշխարհի շատ լրագրողներ: Այնտեղ ցուցադրվեցին նաեւ նրա տեսագրությունները: Այժմ Յվեյանան իր Արցախ կատարած ուղեւորություններից հետո աշխատում է դրան նվիրված մի ֆիլմի վրա:

ՀԱՐՑ. Ե՞րբ առաջին անգամ եղար Հայաստանում:

ՊԱՍԿԱԼԵՎԱ. Մոտ երկու ամիս առաջ: Իմ այդ ուղեւորությունը նպատակային էր. ես որոշել էի խորությամբ զբաղվել արցախյան հարցով, այնտեղից մարդկանց տեղահանման խնդրով: Ընդհանրապես բոլոր թեժ կետերը ինձ հետաքրքրել են: Մինչ այդ ինձ Հարավային Օսեթիայի մասնագետ էին անվանում:

Հ. Քո կարծիքով, արտասահմանյան լրագրողները ինչքանո՞վ են տեղյակ այս խնդրին:

Պ. Նրանք զրեթե տեղյակ չեն: Շատ քիչ տեղեկություն ունեն, թե ինչ է կատարվում Արցախում: Իմացածներն էլ խորհրդային կենտրոնական լրատվական միջոցներից ստացածն է: Դուք ինքներդ լավ գիտեք, որ այն միշտ չէ, որ միանշանակ է: Ես սիրում եմ այն լրագրողներին, որոնք ինքնուրույն ձեռք են բերում սկզբնաղբյուրից: Երբ աղբյուրից ես ջուրը խմում, այն ժամանակ միայն կարող ես իսկական համն զգալ: Ես խրվեցի այդ իրադարձությունների մեջ: Ինքս ամեն ինչ տեսնում եւ ընկալում եմ, եւ, այդուհանդերձ, ես ուզում եմ դրանք ազնվորեն, առանց խեղաթյուրելու հաղորդել:

Հ. Մինչեւ անձամբ Ղարաբաղ մեկնելը, ի՞նչ աղբյուրներից էիք տեղեկանում:

Պ. Արդեն չորս տարի է, ինչ ուսումնասիրում եմ դրա վերաբերյալ բոլոր նյութերը: Փորձում եմ դրանք դրդռել, փորփրել: Հասկացես ոչ օբյեկտիվները, որովհետեւ դա ինձ տալիս է ճշմարտության հասնելու խթան: Հավաքածս նյութերը երկու մասի էի բաժանում. այս կողմի ճշմարտությունը եւ մյուս կողմի ճշմարտությունը: Ներքուստ, հոտառությամբ կազմում էի այդ իրադարձությունների կառուցվածքը, ձեւավորում սեփական տեսակետ: Առավել եւս, երբ սեփական աչքերով տեսա ամենը, հնարավոր չէ այլեւս մազաչափ անգամ սխալվել:

Հ. Գիտես, ցվետանա, ինձ մոտ այնպիսի տպավորություն է, որ դու Ղարաբաղը չես թողնի, մինչեւ ճարցի դրական լուծումը:

Պ. Եթե Ղարաբաղի հարցը ինձնից կախված լիներ, եթե իմ աշխատանքով կարողանայի հարթեցնել այդ կոնֆլիկտը, կմնայի մինչեւ դրա լուծումը: Ցավոք, այն իմ ուժերից եւ հնարավորություններից վեր է: Կարծում եմ, որ այս խնդիրը խորանալու է, իսկ ես չեմ կարող անտարբեր մնալ: Երբ հնարավորություն ունենամ, նորից կգամ լուսաբանելու իրականությունը:

Հ. Իսկ եթե, ասենք մի արասցե, Ղարաբաղը դատարկվի՞:

Պ. Դա մեծագույն ողբերգություն կլինի ոչ միայն հայերի, այլեւ՝ ամբողջ աշխարհի համար: Այնտեղ բնիկ ժողովուրդ է ապրում եւ պետք է ապրի: Այնտեղ իրագործվում է իսկական եղեռն: Դրան պետք է վերջ տրվի: Այսօր համաշխարհային հասարակայնությունը պետք է արձագանքի, ազդեցիկ կազմակերպությունները, դրանց առաջնորդները պետք է այս հարցի կարգավորմամբ իրենց դիրքորոշումը ճշտեն: Դրա համար նրանց հարկավոր է անաչառ տեղեկություն: Սակայն ցանկացած միջոցներով արգելվում է թափանցել Ղարաբաղ:

Հ. Շահումյանում ներքսական դիմադրության ժամանակ դու ներկա ես եղել: Քեզ համար սարսափելի չէ՞ր այդ ամենը:

Պ. Ճիշտն ասած, ես չէի վախենում, քանի որ շուրջ բոլորս իրենց հողը պաշտպանող մարդիկ էին: Այնտեղ չկար խուճապ, վախ, եւ այդ ամենը ինձ էր փոխանցվում: Ես զգում էի, որ մեր ճակատագրերը նույնն են: Միայն գիտե՞ս որ պահին էր սարսափելի. երբ արդեն նահանջեցինք եւ անտառում էինք, տղաներից ոմանք մոլորվել էին, թե ճանապարհին էին մնացել: Մենք երկար սպասեցինք նրանց: Այդ ժամանակ առաջին անգամ վախ զգացի: Տղաների համար սարսափելի վախ զգացի:

Հ. Ես գիտեմ, որ դու տղա ունես հայրենիքում: Անպայման կարոտել ես նրան:

Պ. Եա՛ս, շա՛տ: Տղաս արժանավոր զավակ է: Երբ ես Ղարաբաղում էի, հուլիսի 11-ին լրացավ նրա 10 տարին: Առաջին անգամ չկարողացա կամ զանգահարել, կամ գոնե հեռագրով շնորհավորել նրան: Ինչ-որ պահ, նույնիսկ, մտածում էի՝ դուրս կգա՞մ այստեղից ընդհանրապես, կհասցնե՞մ երկինք տեսնել որդուս: Սիա այսպիսի բուլություն, լիրիկական նահանջ եղավ: Սակայն տղաս շատ լավ գիտի, թե ինչով եմ ես զբաղվում եւ ինչի եմ ձգտում: Նա միշտ բուլղարական հեռուստատեսությամբ դիտում է թեժ կետերից իմ ռեպորտաժները: Ինձ շատ հավատում եւ կարծես թե օրհնում է: Դա ինձ ավելի մեծ ուժ է տալիս անելու գործս հանուն նրա, հանուն ծնողներիս, հանուն Բուլղարիայի. չէ՞ որ մեզ մոտ՝ Բուլղարիայում էլ, նույնպես դժվար շրջան է: Այնպես որ, հարկավոր է ապացուցել, թե ինչի ենք մենք ընդունակ:

Գայանե ԱՖՐԻԿՅԱՆ

Մոսկվա-Երեւան-Բաքու՝ ըստ Հեյդար Ալիեւի

Թուրքական «Հյուրրիյեթ» թերթի մոսկովյան թղթակիցը հանդիպել եւ հարցազրույց է առել Հեյդար Ալիեւի հետ: Այն տպագրվել է թերթի հուլիսի 28-ի համարում: Ալիեւը բավական խստորեն քննադատում է Մոսկվայի խառնակիչ դերն ու երկրի նոր ղեկավարության վարած քաղաքականությունը: Նրա գնահատմամբ, Մոսկվան հայերին ու ադրբեջանցիներին իրար կոտորել է տալիս, իսկ Ադրբեջանի կոմունիստական կուսակցությունը այդ քաղաքականության գործիքն է: Ալիեւի համար համբերության բաժակը լցվել է խորհրդային զորքի կողմից 1990 թ. հունվարի 20-ին Բաքվում կատարված արյունալի գործողությունների հետեւանքով:

Հարցազրույցի մեջ Ալիեւն ասում է, թե չի հավատում «Միութենական նոր պայմանագիր» կոչված ոչնչաբանությանը: Պատմում է, թե Ղարաբաղի խնդիրը ծագելուց հետո Մոսկվան ոչինչ չարեց այն հարթելու համար, իսկ Հայաստանի ազգայնական ուժերն ու Ադրբեջանի կոմունիստները յուր լցրին կրակի վրա:

Ալիեւը դառնությամբ ավելացնում է, թե հակառակ այն բանին, որ Գորբաչովն ու նրա կենտրոնական կառավարությունը իր պաշտոնավարության տարիները «լճացման շրջան» են կոչում, ինքը երբեք չէր համաձայնվի իր ժողովրդին կոտորել տալու: *«Այսօր Բաքվում դեռեւս ուժի մեջ է արտակարգ դրությունը, ու երբ 20-25 հոգի մի տեղ հավաքվում են, Բաքվի պարեսը զինվորներ է ուղարկում ու այն ցրել տալիս: Այս ձեւով Ադրբեջանի անկախություն չի լինի»*, ասում է նա:

Թղթակիցն ավելացնում է, թե նախկին ղեկավարն այսօր զրկված է բոլոր առավելություններից, նույնիսկ տրամադրության տակ ավտոմեքենա չունի: Երբ նրան հիշեցնում են այն օրերը, երբ Ալիեւը վայելում էր ղեկավար գործչի բոլոր արտոնությունները, նա ափսոսանքով պատասխանում է. *«այդ տարիների վարդագույն երազների մեջ քաղված, անկարող էի պատուհանից դուրս նայել»*:

■

«Միջպառլամենտական ինֆորմացիայի փոխանակման» կոնֆերանսը Լենինգրադում

Հուլիսի 29-ից 30-ը Լենինգրադում առաջին անգամ տեղի ունեցավ «Միջպառլամենտական ինֆորմացիայի փոխանակման» կոնֆերանս, որի կազմակերպիչներն էին ԽՍՀՄ պատգամավորների միջոնեգիոնալ խումբը եւ ԱՄՆ-ի կոնգրեսի խորհրդականների «Free Congress Foundation» կազմակերպությունը: Կոնգրեսի ազատության եւ ժողովրդավարության համար կենտրոնը 1990 թվականին ուսուցողական կոնֆերանսներ է անցկացրել Բուդապեշտ, Տալլին, Մոսկվա, Իրկուտսկ, Լայպցիգ, Բուխարեստ, Զագրեբ, Պրագա, Սոֆիա, Երեւան, Կիեւ, Վարշավա, Կրակով, Կատովիցե քաղաքներում: Կոնֆերանսին հրավիրվել էին մասնակցելու Արեւելյան Եւրոպայի նախկին սոցիալիստական երկրներից՝ Բուլղարիայի, Ռումինիայի, Չեխոսլովակիայի, Լեհաստանի, Հունգարիայի, Հարավսլավիայի եւ Խորհրդային Միությունից՝ Ռուսաստանի, Ուկրաինայի, Վրաստանի, Էստոնիայի եւ Հայաստանի ներկայացուցիչները: Հիմնական քննարկման խնդիրներն էին սեփականաշնորհման, ընտրական համակարգի եւ պառլամենտի դերի հարցերը վերափոխումների ընթացքում: Հայաստանից հրավիրված էին Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի արտաքին հարաբերությունների հանձնախմբի քարտուղար Արամ Մայիլյանը եւ Գերագույն խորհրդի պատգամավոր Կարեն Յուզբաշյանը:

Արամ Մայիլյան. Կոնգրեսի խորհրդականները խիստ հետաքրքրված էին Խորհրդային Միությունում եւ Արեւելյան Եւրոպայի երկրներում տեղի ունեցող փոփոխություններով: Վստահ կարող եմ ասել, որ մեծ հետաքրքրություն կար նաեւ Հայաստանի նկատմամբ: Եկանք այն եզրակացության, որ ընդհանուր խնդիրներ շատ կան: Այդ իսկ պատճառով նմանատիպ հավաքները կարեւոր են թեկուզ ինֆորմացիայի փոխանակման առումով: Օրինակ, երբ ես Ուկրաինայի ներկայացուցչին ասացի, որ Հայաստանում հողերի 60 տոկոսը բաժանված է, նա զարմացավ, որովհետեւ մինչ այդ չեն ունեցել հստակ տեղեկություն: Կամ, ասենք, վստահ կարող եմ ասել, որ մեր հարեւան Վրաստանից մինչեւ հիմա այդման ինֆորմացիա չէինք ստացել, ինչման այնտեղ: ԽՍՀՄ հանրապետությունները հաստատես ընդգծեցին օգնությունը կենտրոնի միջոցով չուղարկելու հարցը: Կարեն Յուզբաշյանն իր խոսքում ասաց, որ նշված խնդիրները կարելի է քննարկել միայն խաղաղ պայմաններում: Սակայն ներկա պայմաններում, երբ գրեթե պատերազմական վիճակ է, դրանք անհնարին են դառնում: Կոնֆերանսի մասնակիցները որոշեցին, որ պետք է ավելի հաճախակի դառնան նմանատիպ հանդիպումները սոցիալիստական ճամբարից դուրս եկող երկրների եւ ԽՍՀՄ-ից անջատվող հանրապետությունների միջեւ, որոնք ունեն շատ ընդհանուր խնդիրներ: Ստորագրվեց նաեւ հայտարարություն Հարավսլավիայի վերաբերյալ, որ անհրաժեշտ է դադարեցնել արյունահեղությունը:

Սեթ. Թրթանկով

Սերո Խանզադյանի «Մայյան եղելությանց»ը արաբերեն

Ականավոր գրող Սերո Խանզադյանը տպագրված շուրջ 60 գրքի հեղինակ է, որոնց մեջ՝ 12 վեպ, բազում վիպակներ, պատմվածքներ, ուղեգրություններ, *«Հայրենապատումի»* շարք: Նրա երկերը երկու անգամ, գլխավորաբար վեպերը, վերահրատարակվել են բազմահազար շարքերով: 1967-70 թթ. տպագրվել է գրողի 5 հատորյակը, յուրաքանչյուրը 30 հազար տպաքանակով, իսկ 1981-83-ին՝ 6 հատորյակը դարձյալ նույն տպաքանակով:

Ս. Խանզադյանի շատ երկեր թարգմանվել են ԽՍՀՄ եւ արտասահմանյան ժողովուրդների լեզուներով:

Դեռ վերջերս Երեւանում սպացվել էր գրողի *«Թագուհին հայոց»* վեպի գերմաներեն շքեղ հրատարակությունը:

Մասնագետների գնահատմամբ, գերմաներեն թարգմանությունը բարձրարվեստ մի իրագործում է, որը գերազանցում է նույն երկի ռուսերեն թարգմանությանը:

Եւ ահա, օրերս, ուրախալի լուր ստացվեց նաեւ Սիրիայից: Հալեպի *«Մաարի-Թենեյան մշակութային միության»* հրատարակությամբ, Դամասկոսում, 1990 թ. լույս է տեսել Ս. Խանզադյանի *«Մայյան եղելությանց»* վեպը: Երկը թարգմանել եւ աշխատասիրել է հայտնի արաբագետ եւ թարգմանիչ Նազար Պ. Նազարյանը:

*«Մայյան եղելությանց»*ը, ժամանակագրական առումով, հռչակավոր վիպասանի



Լուսանկարը՝ Լեւոն ՍՐՍԵՆՅԱՆՑԻ

5-րդ վեպն է, որն առաջին անգամ լույս է տեսել Երեւանում, 1966-ին: Սա *«Մայյան եղելությանց»*ի առաջին թարգմանությունն է:

Գ. ԳՈՒՅՈՒՄՋՅԱՆ

«The Armenian Reporter»ը 164 000 դոլլար տուգանք է վճարելու Ե. Ազատյանին

Մ. Նահանգների դաշնակցային դատարանի վճռով՝ Նյու Յորքում լույս տեսնող «The Armenian Reporter» շաբաթաթերթը 164 հազար դոլլար տուգանք պետք է վճարի ՌԱԿ կենտրոնական վարչության անդամ եւ Մամլո դիվանի ատենադպիր՝ հրադարակագիր եւ գրականագետ Երվանդ Ազատյանին:

1987 եւ 1989 թթ-ին «The Armenian Reporter» շաբաթաթերթում, որի խմբագիրն է Էդվարդ Պողոսյանը, լույս էին տեսել անվանարկիչ հոդվածներ ամերիկահայ հայտնի մտավորականի հասցեին, որ իր հերթին դիմել էր դատարան: 1989 հուլիսի 20-ին, Միչիգանի դաշնակցային դատարանի որոշումով, «The Armenian Reporter» թերթը հանձնարարվեց դարձել Ե. Ազատյանին վճարելու 50 հազար դոլլարի տուգանք եւ նույն թերթում տեղի կողմերի հավանությամբ պատրաստված մի հերքումնագիր: Սակայն, նկատի ունենալով, որ թերթը չէր հարգել հանձնարարությունը, Ե. Ազատյանն ընթացիկ տարվա մարտի 12-ին կրկին դիմել էր դատարան, եւ դատավոր Էյբրլ Քուք կրտսերն այս անգամ վճռել էր տուգանքը բարձրացնել 164 հազար դոլլարի:

Մեր կողմից ավելացնենք, որ Էդ. Պողոսյանի «The Armenian Reporter» «անվախ» թերթը հայտնի է «զգայացունց» լուրեր, չստուգված տեղեկություններ, պարկեշտ ու պատասխանատու մամուլին անհարիր նյութեր եւ սպրդասացություններ հրապարակելու մարմաջով:

■

Ֆրանս-հայկական համագործակցությունը միս ու արյուն է ստանում

Ֆրանսիական *«Լը Պոնտ»* հանդեսն իր օգոստոսի 2-ի համարում գրում է, թե «Ֆրանսիայի եւ Հայաստանի միջեւ կիսապաշտոնական համագործակցությունը, որ նախագծվել էր մայիսին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի, իսկ հուլիսի սկզբներին վարչապետ Վազգեն Մանուկյանի Փարիզ կատարած այցերով, սկսում է միս ու արյուն դառնալ: Գրենոբլում կնքվեց համաձայնագիր լեռնային գյուղատնտեսության բնագավառում: 1988-ի երկրաշարժից հետո Ֆրանսիայի կողմից խոստացված հեռախոսային կենտրոնը շուտով կուղարկվի Կումայրի եւ կգործադրվի: Երեւանում կկառուցվի նաեւ վարձակալական օդանավակայան»:

■

digitised by A.R.A.R.@

Ինչպես հայտնի է, հուլիսի 28-ին Երևանի ՋԷԿ-ում տեղի էր ունեցել խոշոր մասշտաբի վթար: Որպեսզի պարզենք, թե ի՞նչ վիճակում են ՋԷԿ-ի վերականգնման աշխատանքները, մեր թղթակից Հակոբ Սասունյանը դիմեց «Հայգլխէներգո» արտադրական միավորման գլխավոր տնօրեն Ֆելիքս Հակոբջանյանին:

Երևանի ՋԷԿ-ը վերականգնվում է

– Դա ծանրագույն վթարներից մեկն էր, որ տեղի ունեցավ մեր ջերմային էլեկտրակայանում: Մեխանիկական վնասվածքի հետևանքով, ինչպես գիտեք, շարքից դուրս էր եկել 6 մքնոլորտ ճնշմամբ դեռերատորը (օդաջրագրտիչ), որը հանգեցրեց պայթյունի եւ կայանի աշխատանքները հասցվեցին զրոյի: Դեռերատորներից թափված բեկորները մեծ վնաս պատճառեցին շենքին եւ սարքավորումներին: Նույն գիշերը վերականգնվեցին կայանի սեփական կարիքները: Այժմ գործում են 150 կիլովատ հզորությամբ երկուական բլոկները: Փաստորեն, կայանի էլեկտրական հզորությունը մասամբ վերականգնված է:

Ինչ վերաբերում է գործարանների ջերմամատակարարման խնդրին, այդ հարցն արդեն լուծված է: Իհարկե, ծանր որոշում ենք ընդունել. կայանը մասնատել ենք, սխեմաներ ենք ստեղծել աղտոտվելու ջերմություն սպացող արտադրական ձեռնարկություններին այն քանակով, ինչքան որ նրանք սկսում էին մինչ վթարը: Իհարկե, չորս խողովակաշարերը դեռ կմնան վերանորոգման մեջ: Դա երկարատև պրոցես է եւ 4-5 ամիս կտեւի, մոտ 1-2 մլ չափ ծախս կպահանջվի: Արդեն մեզ մոտ են ժամանել Մոսկվայի մեր նախարարության գրասենյակի, Երեւանին տվեց որպես խորհրդատվության հերթական «երեխա», որի սարքավորումներն ու պայմանները այսօր չեն բավարարում միջազգային պահանջներին: ՋԷԿ-ը գործում է բաց, որը նման կլիմայական պայմաններում վտանգավոր է, եւ վերանորոգման հնարավորություններ գրեթե չունի: Մեզ համար կարեւոր խնդիր է նաեւ սարքավորումների հարցը. պետք է ճարենք այնպիսի սարքեր, որ համապատասխանեն այս հին կառուցվածքին: Վերանորոգման հնարավորության պակասը մեզ ստիպում է Ուկրաինայից հատուկ կռունկներ բերել, որպեսզի կարողանանք աշխատանքներ կատարել:

– Որքանով է երաշխավորված, որ չեն կրկնվի նման այլ վթարներ:

– Սա առաջին վթարը չէ: Տարբեր պատճառներ են լինում, բայց մենք կաշխատենք, որ այլեւս չկրկնվի: Դրա համար կավելացնենք որոշ աղտոտվող սարքավորումներ: Երեւանի ՋԷԿ-ի 30 տարվա աշխատանքում սա առաջին դեպքն է: Հուսանք, որ այն կլինի վերջինը: Իսկ առայժմ, նախկինում գոլորշի տվող 4 կաթսաների փոխարեն, մենք գործարաններին գոլորշի կտանք այլ սարքավորումների միջոցով: ■

ծով մասնագետներ, որպեսզի մշակեն այն նախագծերը, ըստ որոնց կվերանորոգվի վնասված շինարարական մասը: Ճիշտն ասած, լինելով միութենական «Մինէներգոյի» համակարգում, մենք միշտ էլ կենտրոնացված ձեւով ենք հարցեր լուծում: Եւ մեր ծյուղային նախարարության կողմից միշտ էլ օգնություն ենք ստացել: ՋԷԿ-ը կառուցվելով 1962 թվ-

Նրան պետք է ծառայենք ազգովի

Վերջին ժամանակներում հանրապետության անկայուն իրավիճակը եւ տնտեսական ճգնաժամը Սեւանի պրոբլեմը երկրորդ պլան են մղել: Անհրաժեշտ են նոր միջոցներ Եղվարդի հզոր ջրամբարի կառուցման համար, պետք է դեռեւ Սեւանա լիճը շուտ տվի Որոտան գետի ջրերի մի մասը (տարեկան մոտ 200 մլն խորանարդ մետր ջուր), վերջապես իր ավարտին պետք է հասնի Սեւանի օդակաձեւ կոլեկտորի շինարարությունը, որի աշխատանքը դարձել է մեր օրերի հրապարակ հարց: Այս ամենի հիմքը պետք է դառնա ջրի վարձավճարի սահմանումը:

Սակայն տեսեք ի՞նչ է ասում Սեւանի ՀԷԿ-ի պետ պրն. Զախարյանը. *«Մեր շրջանը չի կարող իր վրա վերցնել այդ ֆինանսական մենաշնորհը, որովհետեւ լիճն ունի մի ողջ ավազան: Բացի դրանից, մենք կիսվում ենք Սրարատյան դաշտի հետ՝ հավասարը հավասարի: Խոսել վարձավճարային կարգ սահմանելու մասին, իմ կարծիքով, իմաստ չունի, որովհետեւ նորից հիշեցնել ենք տալիս Հայաստանի գավառային մասնատվածության ժամանակները»:*

Հետաքրքիր է. լճի ջրերը ոռոգման տեղամասում գնվում են, այսինքն գյուղական շրջաններում ջուրն ուղղակի վաճառվում է, սակայն այն շրջանը, որը կոորդինացնում է կենարար ջրերի լճից դուրս մղման աշխատանքները, ոչանալիք չունի, քանի որ չենք ուզում «զավառայնորեն մասնատված» լինել: Կարծում ենք, որ վարձավճարի սահմանումը եւ կիրառումը կնպաստի Սեւանի ջրերի խնայողական օգտագործմանը եւ լճի փրկությանը:

Վիգեն ՍԻՍՈՒՅԱՆ

Գամսախուրդիայի ամերիկյան այցի մասին

Վերջերս Վրաստանում սկսեց լույս տեսնել The Georgian Independent (Վրացական անկախություն) անգլերեն պարբերաթերթը, որի 2-րդ համարից տեղեկանում ենք, որ նախագահ Զ. Գամսախուրդիայի Ս. Նահանգներ այցի մասին առաջարկն արվել է նախկին նախագահ Ռիչարդ Նիքսընի կողմից, Թբիլիսիում: Հաստատելով, որ նախագահ Բուշը պատրաստակամություն է հայտնել ընդունելու Զ. Գամսախուրդիային, իբրեւ պատվո հյուր, թերթն ավելացնում է, որ վրաց նախագահի «Սպիտակ տան ընդունելությունը չի կարող պաշտոնական բարձր մակարդակի վրա լինել, քանի որ Վրաստանը պաշտոնապես տակավին գտնվում է ԽՍՀՄ-ի կազմում»:

Սադրիչ հայտարարություններ հայերի դեմ

Նույն թերթի հունիսի համարում (թիվ 2) մի փոքրիկ տեղեկություն կա այն մասին, թե «Վրաստանում եւ հատկապես նրա սահմաններից դուրս սադրիչ հայտարարություններ են» արվում այն մասին, թե իբր պրն. Զվիադ Գամսախուրդիան «պատրաստվում է ցեղասպանության ենթարկել հայերին» եւ թե «հայերը բոլորից ավելի ճնշված ժողովուրդն է Վրաստանում»:

Հերքելով այդ տարածությունները, թերթը հաղորդում է, որ դրանք գլխովին հակասում են իրականությանը եւ թե նախագահական վերջին ընտրությունները պարզ ու մեկին արդացուցեցին հակառակը, երբ Վրաստանի ամենախիտ հայ ազգաբնակչություն ունեցող շրջաններում հայերը բացարձակ մեծամասնությամբ կողմ են քվեարկել Զ. Գամսախուրդիային:

Նույնիսկ թուրք լրագրողն է զարմանում

Թուրքական «Գյունեշ» թերթի աշխատակից Ելիֆ Թուրքան թերթի հուլիսի 19-ի համարում անդրադառնում է Պոլսի հայկական ս. Փրկիչ Ազգային հիվանդանոցի ցավոտ հարցին, նշելով, որ այդ հաստատությունը գտնվում է փակվելու վտանգի դեմ հանդիման, քանի որ հարկերից ազատ չի արձակվում: Հակառակ այն բանի, որ նմանօրինակ 129 վագոֆներ հարկերից ազատված են, հայոց հիվանդանոցին մերժում են այդ շնորհը, որովհետեւ պնդում են, թե հաստատությունը հիմնվել է հանրապետությունից առաջ: Ֆինանսների նախարար Աղնան Քահվեջին հայտնել է, թե սկսել է ննջել հայկական վագոֆների դրությունը, սակայն հույս չունի, թե դրանք կշահեն:

Հիվանդանոցի հոգաբարձության ատենապետ Փիլո Սբանը բողոքում է, ասելով, թե որեւէ հաստատություն հարկերից ազատելու համար կարեւոր չէ ուշադրություն դարձնել նրա հիմնադրման թվականի վրա, այլ՝ նրա գործունեության: Մենք հանրային սպասարկություն ենք կատարում, պետության ուզածից էլ ավելի լավ ծառայություն մատուցում:

Փիլո Սբանը նկատել է տալիս, որ ծերանոցի 300 խնամակալներից 200-ը ծրիաբար են խրճամվում:

Թղթակիցը նշում է, որ 1990 թ. փետրվարի 15-ին հրապարակված պաշտոնաթերթով 129 վագոֆներ հարկերից ազատվեցին, սակայն դրանց մեջ մի հատիկ հայկական վագոֆ չկար: ■

Շահումյանում դրությունն անկայուն է
պատմում են ռուս ժողպատգամավորները

Երեք օր առաջ Շահումյանից Երեւան ժամանեց ռուս ժողպատգամավորների հերթական խումբը, որն, ինչպես հաղորդել էինք, այնտեղ էր գտնվում իրադրությունն ուսումնասիրելու եւ վերին աստիճաններում այն ներկայացնելու նպատակով: Ահա թե ինչ են պատմում նրանք:

–Երբ մենք Վերիշեն հասանք, վիճակը համեմատաբար խաղաղ էր, բայց հետո սկսվեցին կրակոցները: Գնդակոծությունները հիմնականում հոգեբանական նշանակություն ունեին: Երեւի ուզում էին վախեցնել մեզ,– *ասում է ԽՍՀՄ ԳԽ պատգամավոր Ս. Բելոզերցեւը:*

– Հույն եւ հոլանդացի ներկայացուցիչները ցանկացան առաջանալ եւ տեղայնորեն ընկարահանումներ կատարել, սակայն խաչաձեւ գնդակոծությունը նրանց գետնին գամեց: Կրակում էին թե՛ խորհրդային բանակի, թե՛ ներքին զորքերի մարտիկները եւ թե՛ ադրբեջանական օմոնականները: Կրակոցները տեղում էին ոչ միայն զորամիավորումների գրաված հարմարավետ դիրքերից, այլ նաեւ մոտակա թփուտներից եւ մացառաղաս լանջերից: Երեւի հրամայված էր մարտի կեղծ տեսարան սարքել, որպեսզի մեզ՝ ականատեսներիս համար այն կարծիքն ստեղծվեր, թե զինվորները կրակում են մացառներում թաքնված հայ պատանիների վրա, սակայն չգիտես ինչու բոլոր կրակոցները համաձայնեցված փակում էին հոլանդացի լրագրողների ճանապարհը,– *ավելացնում է ԽՍՀՄ ԳԽ պատգամավոր, սահմանադրական հանձնաժողովի անդամ Վ. Շեյնիսը:*

– ԽՍՀՄ ԳԽ պատգամավոր, գնդապետ Սմիռնովն այնտեղ մեծ գործ է անում, այդ հիմնականում նրա գերմարդկային ջանքերի շնորհիվ է, որ այժմ Շահումյանի շրջանում դադարեցված է հայ ժողովրդի բռնագաղթը: Նա դեպքերի կանգնեցման եւ հարցը հետագայում խաղաղ լուծելու համար ծրագիր է մշակել, սակայն չգիտեմ, թե որքանով այդ ծրագիրը կիրականացվի: Համենայն դեպս այն, ինչ կատարվում էր Շահումյանում, ծրագրված էր ամենավերեւների անմիջական ցուցումով եւ Սմիռնովին հաջողվեց փոխել դեպքերի ընթացքը,– *ասում է Անատոլի Շաբադը:*

– Մինչեւ Շահումյան գալը, անկեղծ ասած, ես չէի կարողանում հավատալ, որ այնտեղ կատարվում է այդքան ծանր հանցագործություն: Սակայն դեպքերին ականատես լինելով համոզվեցի, որ այն, ինչ մենք գիտենք մի քանի խիզախ լրագրողների հաղորդումներից, կատարվածի չնչին մասն է, իրականում կատարված հանցագործությունը շատ ծանր է եւ դրա մեղավորները պետք է պատժվեն, այլապես իրավունք չունենք մեզ ոչ միայն դեմոկրատներ անվանելու, այլեւ համարվելու 20-րդ դարում ապրող մարդ արարածներ: Չէ որ ցեղասպանությունն ակնհայտ է եւ այն կատարվել է խորհրդային բանակի անմիջական մասնակցությամբ,– *լրացնում է Լ. Պոնոմարյովը՝ ՌԽՖՍՀ ԳԽ անդամ, հասարակական կազմակերպությունների հետ կապերի հանձնաժողովի նախագահը:*

Իսկ Շահումյանում դրությունը շարունակում է անկայուն մնալ:

Սեփ. թղթ.

Լուսանկարները Մարտին ՇԱՀՈՒՋՅԱՆԻ

Ահա մի խումբ ժողպատգամավորների հետաքրքիր տեքստը, ուղղված նախագահ Մ. Գորբաչովին, Ռուսաստանի նախագահ Բ. Ելցինին, Սդերբեջանի նախագահ Ա. Մութալիբովին, պաշտպանության նախարար Դ. Յազովին, ներքին գործերի նախարար Բ. Պուգոյին

«...սկսվել է հայաթափված Բուզլուխ, Էրքեջ եւ Մանաշիդ գյուղերի բնակեցումը ադրբեջանցիներով, այն ժամանակ, երբ այդ գյուղերի բնակչությունը գտնվում է հարեւան հայկական գյուղերում: Տեղի է ունենում մարդու իրավունքների աղաղակող ոտնահարում: Դրությունը շրջանում շատ լարված է: Այդպիսի վիճակի կայունությունը երկար մընալ չի կարող: Ինքնապաշտպանական ուժերը կարող են հարձակման անցնել եւ ազատել Մանաշիդը, Բուզլուխը եւ Էրքեջը:

Շրջանի վիճակը կայունացնելու եւ ինքնապաշտպանական ուժերի ցրման համար անհրաժեշտ է կատարել հետեւյալ գործողությունները.

1) խորհրդային զորամիավորումները անհապաղ տանել իրենց նախկին դիսլոկացիոն վայրը,

2) շատ դադարեցնել Բուզլուխ, Մանաշիդ, Էրքեջ գյուղերի բնակեցումը ադրբեջանցիներով,

3) դուրս բերել հայաթափված գյուղերից եւ Շահումյանի շրջանի ամբողջ տարածքից Ադրբեջանական օմոնականների խմբավորումները,

4) հայաբնակ եւ ադրբեջանաբնակ գյուղերի արանքում տեղադրել անջատիչ կետեր՝ ներքին զորքերի այն ծառայություններից, որոնք նախկինում չեն մասնակցել կոնֆլիկտին,

5) հնարավորություն ստեղծել բռնագաղթված բոլոր ընտանիքների համար վերադառնալու Բուզլուխ, Մանաշիդ եւ Էրքեջ գյուղերը:

Ինքնապաշտպանության ուժերը կայունությունը պահպանելու համար կհրաժարվեն բոլոր մարտական գործողություններից, եթե կատարվեն վերոհիշյալ բոլոր կետերը:

Մեր կարծիքով ԽՍՀՄ, ՌԽՖՍՀ, Մոսկվայի, Լենինգրադի ժողպատգամավորների մշտական ներկայությունը կարող է երաշխիք դառնալ այս կետերի կատարման համար: Դրա հետ մեկտեղ պետք է մշտական կապ պահպանել պատգամավորական խմբի եւ Շահումյանի շրջանում ծառայություն անցկացնող զինվորական միավորումների ղեկավարության հետ:

գ. Վերիշեն, Շահումյանի շրջ. 4.08.91 թ.

Վ. Սմիռնով (ԽՍՀՄ ժողպատգամավոր) Լ. Պոնոմարյով (ՌԽՖՍՀ ժողպատգամավոր) Ս. Վինցիկով (Լենինգրադի պատգամավոր)

Տարեվերջ զնդացրային եւ ավտոմատային կրակոցների տարափից փրկված եւ ոտքերդարձած Վերիշեն, ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր Սերգեյ Բելոզերցեւը եւ Մոսկվայի (Մոսխորհրդի) ժողովրդական պատգամավոր Լեւ Բալաշովը, որոնց հետ էին «Մեմորիալ» ընկերության անդամներ Ալեքսանդր Շերկասովը եւ Յան Ռաշինսկին:
Ներքում՝ ժողովրդական երկու պատգամավորներ հնարավոր են կազմում՝ ուղղված ԽՍՀՄ նախագահ Գորբաչովին:

ԽՍՀՄ ժողպատգամավոր զնդապետ Վլադիմիր Սմիռնովը, Սերգեյ Բելոզերցեւը, Շահումյանի շրջգործկոմի նախագահ Շահեն Մեղրյանը եւ գրող, ԽՍՀՄ ժուռնալիստների միության անդամ Ինեսա Բուրկովան:
Նրանք աջակցում են ադրբեջանական կողմի ներկայացուցիչներին, որոնք այնքան էլ չեռանալիցին, մարտական հրամանին, որ այդքան էլ չկատարվեց:

digitised by A.R.A.R.@

«Հեռուստատեսության ներկա կառուցվածքները բանդելը ես առաքինություն եմ համարում»

ասում է հեռուստառադիոընկերության նախագահի հեռուստատեսության գծով տեղակալ Տիգրան Պասկեւիչյանը

- Որո՞նք են որպես տեղակալ Ձեր պարտականությունները: Օրինակ, ինձ հայտնի է, որ մինչեւ երեք հեռարձակելը Դուք նայում եք «Լրաբեր»ի բողարկումները, այսինքն ինչ-որ առումով նաեւ գրաքննի՞չ եք:

– Ես գրաքննիչ չեմ: Ես աղահովում եմ ոեսական բաղադրությունը հեռուստատեսությունում, որպեսզի նաեւ «Լրաբեր»ը ճիշտ գնա՝ ոչ մի ավելորդ կամ պակաս բան չլինի:

- Ո՞ր, ո՞ւմ տեսանկյունով «ճիշտ գնա»: Կարծեմ այսօր հեռուստատեսությունը վարչապետին են հանդարում, ու դրա ըստույգ ապացույցները նաեւ «Լրաբեր»ում են արտահայտվում, երբ, օրինակ, Վազգեն Մանուկյանի այցերի վերաբերյալ նյութերն ավելի առաջ են հաղորդվում, քան Գերագույն խորհրդին վերաբերող լրատվությունները:

– Ես բնավ դա ի նկատի չունեի, այլ մեր հանդարեսության բաղադրիչը:

- Երբերի քանկ ժամանակը դուք մեծ մասամբ վատնում եք հարցազրույցներով, որը հեռուստատեսությունում գերիշխող ժանր է դարձել: Գումարվում է դրանց մատուցման միշտ նույն ձեւը՝ սեղանի մոտ նստած, նույն աթոռները կամ բազկաթոռները եւ այլն:

– Հարցին ուզում եմ հարցով պատասխանել: Ուրիշ էլ ինչպե՞ս կարելի է կազմակերպությունները ներկայացնել:

Այսօր մեզ նաեւ մեղադրում են ծրագրերի անկայունության համար՝ թերթում տպագրվում է մի բան՝ երեք է գնում այլ բան: Բայց հանդարեսության վիճակը ժգրտորեն պրոյեկտվում է հեռուստաէկրանին: Մենք պիտի *հեռատես* իրադարձությունների ետեւից հասնենք, ու ծրագրերի հաճախ փոփոխությունները միայն խոսում են այն մասին, որ մենք օպերատիվ ենք աշխատում:

- Ես հեռուստատեսության աշխատանքը բնավ էլ օպերատիվ չի անվանի... Հեռուստատեսությունում չկա՞ն այնպիսի լրագրողներ, որ հոնեք նետվեին «թեժ» վայրերից ռեպորտաժներ բերելու:

– Կան: Չեմ ուզում թվել այն մի քանի լրագրողների անունները, որոնք այսօր էլ Ճանապարհում են:

Շատ ծիծաղելի թվացող մի բարդություն կա: Հեռուստատեսությունն այսօր շատ սարքավորումներ ունի: Շամբարին, Նոյեմբերյան, Իջեւան այդ ընդամենը մեկ-երկու սարքավորումները ուղարկելը գնում եմ, որ ճիշտ չէ: Մի քարի կտորը, մի գնդակը բավական կլինեն, որ այդ 100 հազարանոց աղբանոցները դեն գցենք: Մի քանի անգամ եւ Գերագույն, եւ Նախարարների խորհուրդներին, եւ մնացած համապատասխան մարմիններին խնդրել եմ ինձ թվում է, բարդ չէր էժանագին եւ թեթեւ հեռուստախցիկներ ձեռք բերելը: Չի՞ արվել, եւ այսօր ես մեր ունեցած քանկագին սարքավորումները երբե՞ք սահման չեմ ուղարկի: Ուղարկում եմ կինոխցիկներ, որ մինչեւ տեղ են հասնում, մինչեւ կինոժապավենները լաբորատորիայում երեւակվում, մոնտաժվում են՝ լավագույնը առնվազն մեկուկես-երկու օր է անցնում:

Օպերատիվության չապահովման պատճառներից մյուսն էլ հետեւյալն է: Սահմանամերձ շրջաններ ուղղաթիռով թղթակիցներ ուղարկելն ինձնից մի ամբողջ աշխատանքային օր է խլում, հաճախ՝ աղաղյուն: Երբ պահանջելու ժամանակը գալիս է՝ բոլորը լա՞վ պահանջում են: Ես Գերագույն խորհրդում Գագիկ Հարությունյանի ներկայությամբ հարց եմ տվել, թե երբ Գեսաշենում հայտնի դեպքերը տեղի ունեցան եւ Բարկեն Արարքյանն ուղղաթիռով այնտեղ մեկնեց՝ ինչո՞ւ որեւէ մեկը հեռուստատեսությունից չզանգեց ու չպատվիրեց, որ գոնե որեւէ օպերատոր ուղարկենք: Գուցե դա մեր պատմության մեջ վերջին անգամն էր, որ հնարավորություն ունենք Գեսաշենի վրա պտտվելու...

Հետո, երբ ամեն ինչ վերջանում է՝ մեզ պատվիրում են, որ կատարածի մասին Ֆիլմ նկարենք: Բայց ո՞վ է մեզ դրա հնարավորությունը տվել՝ բացարձակապես ոչ ոք:

- Վարդան Հովհաննիսյանին ո՞վ էր հրաթարավորություններ ընձեռել, պայմաններ ապահովել...

– Վարդանն անհատ է, մենք՝ կազմակերպություն: Եթե խոսքը նախաձեռնությանն է վերաբերում այն մեր կողմից միշտ կա: Պարզապես ինձ պիտի հայտնեն՝ ես չեմ կարող անընդհատ զանգ տալ այս ու այնտեղ եւ նույն հարցը տալ. «Ուղղաթիռ թռչելու՞ է, թե՞ ոչ»: Քանի՞ անգամ կարող են թղթակիցները օդանավակայանում օրերով թռիչքի սպասել ու էլի՝ հաճախ աղաղյուն...

- Մի գուցե այն, ինչ պետական կարգավիճակ ունենալով ձեզ չի հաջողվում, կհաջողվի, երբ հեռուստատեսությունում նոր օդակնե՞ր ավելանան: Օրինակ, հայտնի է, որ իրենց հեռուստաժամերը կուզենային ունենալ ռամկավարները, դաշնակցականները, որոնք միջոցների առումով գոնե առավել քաղաքակիրթ վիճակում են:

– Ով որ ցանկանում է հեռուստատեսությանը կամ ընդհանրապես հայկական ոեսականությանը օգնել՝ թող օգնի: Բայց մինչեւ այսօր, այս պահը որեւէ կազմակերպություն մեզ մի ձայնագրիչ անգամ չի նվիրել, մի ռուբլի ինքնակամ չի փոխանցել: Բայց մեզնից բողոքում են բոլորը՝ եւ աղվենտիստները, եւ կրիշնայականները, եւ ԱԻՄ-ը, եւ դաշնակցությունը, եւ ՀՀԴ-ն, եւ Հայ դատը, եւ Գերագույն խորհուրդը, եւ Նախարարների խորհուրդը... Բայց որեւիցե մեկը հարցրե՞լ է, թե ի՞նչ աշխատավարձ են ստանում մեր աշխատակիցները՝ 135 ռուբլի մի քանի կարգին օպերատորը, 110 ռուբլի է ստանում բեմադրիչի օգնականը: Վերջիվերջո, այսօր քանի կարգին բեմադրիչներ ունենք, որոնց մեր կոմիտեն պարտք է: Ո՞վ է հետաքրքրվում, որ երբ Ֆիլ ես



վճարում՝ մնում են մի կերպ քաղաքները: Կարգին, ինքն իրեն գնահատող մասնագետը հեռանում է...

- Դուք հանդգնա՞ծ եք, որ եթե նյութական եւ տեխնիկական պակասը լրացվի՝ ժամանցաշոուների պակաս չի զգացվի:

– Պետության տվածով մենք կարող ենք հաղորդումների որակը բարձրացնել, բայց այսօր հեռուստատեսության ստեղծագործական կազմը մոտ 600 մարդ է՝ այնքան, երբ 100 կարգին աշխատողով, իմ կարծիքով, կարելի էր 13 ժամանոց երեք ապահովել:

- Դուք կոմիտեում կադրային քաղաքականություն իրականացնելու հնարավորություն ունեիք...

– Այստեղ արմատական կառուցվածքային փոփոխություններ են անհրաժեշտ, որ չկարողացանք իրականացնել ինչ-ինչ պատճառներով: Երբ հիմնարար օրենքների փոփոխություններ չեն կատարվում՝ լոկալ, տեղական բնույթի գործունեությունը սահմանափակված է: Փորձի՛ր որեւէ մեկին ասել, որ այստեղ չի աշխատելու՝ նա պարզապես ՌԶ դասի կտա: Փորձի՛ր ասել, որ արածն անորակ է՝ նա գեղարվեստական խորհուրդ, ատեստացիոն հանձնաժողով կպահանջի: Փորձի՛ր որակյալ աշխատողին ավելի շատ վճարել... Բազմաթիվ օրինակներ կարող եմ բերել:

Կարծում եմ, որ հեռուստատեսությունում երկու շատ ամուր օղակներ պիտի լինեն՝ լրատվական ծրագրերի ստուդիան, որն աշխատում ենք ստեղծել, եւ «Լրաբեր»ի այսօրվա վայրիվերումները բացատրելի են կատարվող փոփոխություններով: Երկրորդը ծրագրերի տնօրինությունն է, որը պիտի պատվիրատու լինի: Իսկ այսօր գոյություն ունեցող թեմատիկ բաժանումներով խմբագրություններն իրենց չեն արդարացնում:

- Դուք առանց այդ էլ լուծարեցիք որոշ խմբագրություններ՝ ստեղծելով ստեղծագործական միավորումներ, բայց դա չընե՞ց տարբեր անվանումով նույն բանը:

– Չեն սխալվում նրանք, ովքեր ոչինչ չեն անում: Ես փորձեցի ինչ-որ բան անել, գուցե եւ սխալվեցի: Այնուամենայնիվ մարդիկ, որոնք հեռուստատեսության նկատմամբ արդեն «սառած» էին՝ սկսեցին գործ անել: Բայց հիմնականում խմբագրական կազմը փոխվեց: Խմբագիրներ միշտ կարելի է գտնել, իսկ բեմադրիչ գտնելը շատ դժվար է: Տարբեր ուսումնական հաստատություններում ինչ-որ բեմադրիչի որակավորում ստացածը պիտի գոնե մի 8 տարի հեռուստատեսությունում աշխատի, որ հեռուստատեսային բեմադրիչ դառնա: Արդյունքը՝ ունեցանք մարդիկ, որ հեռուստաէկրանից խելոք մենկնաբանություններ, խոսք կարող են ասել, բայց մատուցման ձեւը նույնն է՝ այո՛, նույն սեղանը, նույն բազկաթոռները եւ այլն:

- Հեռուստաբեմադրիչների մասին ձեր ասածը չի՞ վերաբերում հեռուստալրագրողներին: Դա էլ է անպայման առանձին որակ, իսկ այսօր եթերում մեծ մասամբ դիլետանտներ, սկսնակներ են, որոնց շնորհիվ հեռուստատեսությունը փորձարարական է դարձել:

– Այսօր Հայաստանում ոչ մի հեռուստատեսային մասնագետ չի պատրաստվում՝ անգամ խոսքի կուլտուրային տիրապետող հաղորդավարներ: Եւ քանի որ արհեստավարժներ չկան՝ մեր փորձերը պիտի եթերում լինեն: Այս առումով ես իմ աշխատանքը հեռուստատեսությունում կգնահատեի որպես քանդելու, քան կառուցելու աշխատանք: Բայց երեւի՛ նկատել եք, որ շատ ու շատ հին բաներ այսօր էկրանից վերացել են: Միանգամից շատ նոր բաներ չէինք էլ կարող ստեղծել: Օրինակ, առաջ այսպիսի միտում կար՝ եթեր էին դուրս գալիս բոլորը, անկախ բնախոսական արատներից, արտաքին տվյալներից եւ այլն: Մի քանի ամիս առաջ երկու աղջիկ էին ցանկություն հայտնել այստեղ աշխատելու՝ մեկը լեզվական արատ ուներ, մյուսը՝ ռնգային ծանր արտասանություն: Իմ վերլուծության եզրակացությունն այն էր, որ հաղորդավար աշխատելու նրանց վստահության հիմքը հեռուստաէկրաններից իրենց նմաններին տեսնելն էր: Երբ էկրանից նորմալ մարդիկ կերեւան, նորմալ խոսք կլսվի՝ նորմալ մարդիկ էլ կգան այստեղ:

- Հեռուստատեսությանը ներկայացվող ծյուս մեղադրանքը անկախության քարոզչության բացակայությունն է, որ ըստ ձեր հաղորդումների չի կարելի ասել, որ սա դեպի անկախություն գնացող մի երկրի պետական հեռուստատեսությունն է, որ եղածն էլ արվում է էլի հարցազրույցներով կամ «Անկախություն» ծարաթոնի տիպի ծանրաձարս, դանդաղընթաց հաղորդումներով:

– Հարցը շատ լուրջ մեղադրանքի նման է հնչում ու այն ինձ վրա եմ ընդունում՝ հատկապես մարաթոնի կազմակերպությամբ, որովհետեւ դրա հեղինակը ես եմ: Լավ է ստացվել՝ փառքը իմն է, վատ է ստացվել՝ ինձանպատասխանությունն էլ եմ ընդունում: Բայց ամեն օր փոքրփոքր հաղորդումներով եթեր դուրս գալը պակաս արդյունավետ կլիներ, քան անկախության վերաբերյալ ամբողջ խոսքը մի օրվա մեջ խտացնելը:

- Բայց ո՞վ հանդիսատես ունի մի 5-6 ժամ շարունակ միանվագ խոսք լսելու...

– Հեռուստամարաթոնը նախատեսված է այն խավի համար, որը դեռ կասկածում է, «այո»ի եւ «ոչ»ի արանքում է: Ինձ թվում է, նրանք բոլորն էլ հետեւում են մարաթոնին: Զրկասկածողներին երեւի ծանձրալի թվա: Անկեղծորեն շատ կուզենայի, որ անկախության քարոզչության անհրաժեշտությունն ընդհանրապես չլիներ, բայց քանի որ կա հակառակ քարոզչությունը...

- Վերջին հարցը: Անձամբ ես մինչեւ հոկտեմբերի 16-ը երբեք չէի հանդիպելի հեռուստատեսությունում աշխատել: Մտավախության համար հիմք հանդիսացող նախադեպերն արդեն կան՝ ըստ երեւույթին հեռուստատեսությունը կդառնա անձնական, խմբակային, կուսակցական շահերի բախման, հաշիվների մաքրման, հարաբերությունների պարզման տեղ:

– Այս պահին չեմ խոսում իմ համոզմունքների, թեքումների մասին, ավելի կոպիտ՝ թե ում կողմից եմ եւ ում կողմից չեմ: Համենայն դեպս, քանի դեռ այստեղ եմ, եթերում նենգություն, վրիժառություն եւ այլն թույլ չեմ տա: Բայց մինչեւ հոկտեմբերի 16-ը իսկապես հեռուստատեսությունում դժվար կլինի աշխատելը...

Անցած օգոստոսից հետո ես շատ մեծ ոգեւորությամբ հեռուստատեսություն եկա՝ զոհելով նախ եւ առաջ իմ անձնական ազատությունը եւ ուրիշ շատ ու շատ բաներ: Ինձ թվում էր, որ միանգամից ինչ-որ բաներ ենք ընկալելու կառուցել, որ մենք ավանդույթաստեղծ ենք լինելու: Բայց շատ շուտով համոզվեցի, որ հիմնականում ոչինչ չի փոխվում ու ավանդույթներ դեռեւս չկան: Այսօր ինձ համարում եմ անցումային շրջանի չինովնիկ՝ բառիս բուն իմաստով: Եւ երբ ասում եմ՝ ավելի շուտ հանդել, քան կառուցել՝ այս դեպքում ես քանդելն առաքինություն եմ համարում:

Զրույցավարը՝ Մնա ԽՄՐՍՅԵԼՅԱՆԸ

ՀՀՇ պատգամավորական խորհրդակցությունում

Օգոստոսի 4-ին համագումարների պալատում տեղի ունեցավ ՀՀՇ բոլոր մակարդակների պատգամավորների խորհրդակցությունը, որը նվիրված էր Հայաստանի ներքին իրավիճակին եւ հանրաքվեի հետ կապված քարոզչական աշխատանքներին:

Հավաքածները մեկ ոտքի լռությամբ հարգեցին հերոսաբար զոհված Գուրգեն Առաքելյանի հիշատակը:

Իր ելույթում ՀՀՇ վարչության անդամ, Գերագույն խորհրդի անկախ պետականության հաստատման եւ ազգային հաղթականության հանձնաժողովի նախագահ Է. Եգորյանը, անդրադառնալով Հայաստանի իշխանությունների վարած քաղաքականությանը, նշեց, որ այդ քաղաքականությունը հետաքրքիր է երկու նպատակ զարգացնել, խորացնել Հայաստանի ինքնիշխանությունը եւ հաստատել հորիզոնական կապեր հանրապետությունների հետ:

Առաջին նպատակին հասնելու ճանապարհը, ըստ Եգորյանի, եղել է կենտրոնի հետ որոշ ազատման քաղաքականությունը, որի օրինակը կարող է հանդիսանալ մարտի 17-ի միութենական հանրաքվեին, ինչպես նաեւ Միութենական պայմանագրի քննարկումներին չմասնակցելը:

Պետական մակարդակով լայն փոփոխներ հաստատելով արտաքինանական երկրների հետ, ազդելով միջազգային հասարակական կարծիքի վրա, մեզ հաջողվեց խուսափել լայնածավալ արյունահեղությունից, ասաց Եգորյանը:

Խոսելով Հայաստանում տեղ գտած քաղաքական ուժերի բաշխման մասին, ելույթ ունեցողն ասաց. **«Մի գիծ կա, որի մի կողմը կանգնած են կոմկուսի ղեկավարությունը եւ դաշնակցության ղեկավարությունը, մյուս կողմը՝ ՀՀՇ-ն եւ մի քանի փոքր կազմակերպություններ:**

... Մի կողմն ուզում է, որ Հայաստանը մնա Միության կազմում, մյուս կողմը հետեւյալ ձեւով է մոտենում այդ հարցին. այն կարելի է քննարկել այն իմաստով, որ մենք ունենանք լավ հարաբերություններ թե՛ նոր Միության եւ թե բոլոր հանրապետությունների հետ»:

ՀՀՇ վարչության նախագահ Վ. Սիրադեղյանը հիշեցրեց, որ թղթի պատարները գրեթե հիմնովին սպառված են, եւ դա կարող է բերել հանրաքվեի քարոզչական աշխատանքի ձախողմանը, քանի որ «Հայք» եւ «Հայաստանի Հանրապետություն» թերթերը տպագրվում են չափազանց փոքր տպաքանակով:

Թղթի այս ծգնաժամի պատճառներից մեկը Վ. Սիրադեղյանը տեսնում է նրանում, որ **«Դաշնակցությունը, որ արդեն 5 թերթ ունի Հայաստանում, մեկ տարի առաջ 2,5 միլիոն ռուբլով գնել է այն ամբողջ թուղթը, որ կար այդ պահին հանրապետությունում»:**

ՀՀՇ վարչության նախագահը կոչ արեց հավաքածներին դրամական օգնությամբ նպաստել հանրաքվեի նախօրեին դրսից այդքան կարեւոր թղթի գնմանը:

ՀՀՇ վարչության անդամ, ՀՀ ԳԽ փոխնախագահ Բ. Ուրարտյանը նշեց, որ մեկ տարի առաջ վերցնելով իր վրա ընտրապայքարի ամբողջ ծանրությունը, ՀՀՇ-ն ինքը ստեղծեց բազմակուսակցական խորհրդարան, պատասխանելով այլ կազմակերպությունների թեկնածուներին:

Խոսելով անցած մեկ-երկու տարվա մասին, Բ. Ուրարտյանն ասաց, որ **«տոտալիտարիզմը Հայաստանում տապալվեց ոչ թե Գորբաչովի «պերեստրոյկայի, այլ ՀՀՇ-ի շնորհիվ»:**

«Այսօր մենք համոզվեցինք, ասաց Գերագույն խորհրդի փոխնախագահը, **որ կոմկուսի միակ երազանքը նախկին իշխանությունների վերականգնումն է, եւ նրանք (կոմունիստները) դրա համար ոչ մի բան չեն խնայում»:**

Բ. Ուրարտյանը նշեց, որ այն կազմակերպությունները, այդ թվում եւ կոմկուսը, որոնք «վերակենդանացան» շնորհիվ ՀՀՇ-ի, այսօր կազմում են նախկինում անհնար, անընդունելի բլոկ ընդդեմ ՀՀՇ-ի:

Անդրադառնալով մոտ ապագայի խնդիրներին, Բ. Ուրարտյանը նշեց, որ դրանք երեքն են. հանրաքվեն, Հայաստանի Հանրապետության նախագահի եւ ԳԽ պատգամավորների ընտրությունները 20 թափուր պատգամավորական տեղերում: Խոսելով հանրաքվեի մասին, Բ. Ուրարտյանը մասնավորապես ասաց. **«Այսօր ամեն ինչ կարվի հանրաքվեն տապալելու համար... Կարող են օգտագործվել ինչպես ներքին, այնպես էլ արտաքին ուժեր, ինչպես դա արվում է Արցախում:**

... ՀՀՇ-ն այսօր միակ ուժն է հանրապետությունում, որ կարող է աղաղակել «այո»ն:

... ՀՀՇ-ն պետք է հաղթի հանրաքվեում, պետք է հաղթի հանրապետության նախագահի ընտրություններում, պետք է հաղթի Գերագույն խորհրդի պատգամավորների ընտրություններում»:

Իրենց մտահոգությունը գյուղում տիրող իրավիճակի վերաբերյալ հայտնեցին ՀՀՇ վարչության անդամներ, պատգամավորներ Ս. Գեւորգյանը եւ Տեր-Հուսիկ քահանա Լազարյանը:

Իշխանությանը, կառավարությանը, ՀՀՇ-ին իրենց խնդիրները հասցնելու, լուծելու նպատակով առաջարկվեց ՀՀՇ շրջանակներում ստեղծել գյուղացիական միություն:

Որոշվեց հաջորդ ընդհանուր պատգամավորական խորհրդակցությունը հրավիրել սեպտեմբերի 1-ին:

digitised by A.R.A.R.@

Իրանը «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆԵՐՈՒՄ» կազմակերպության հաշվետվություններում

Վերջերս «Միջազգային նեռում» կազմակերպությունն աշխարհում մարդու իրավունքների ոտնահարման փաստերի վերաբերյալ հրապարակեց իր տարեկան հաշվետվությունը, որում հրնությամբ են առնվել 1990 թվականի ընթացքում տարբեր երկրներում հիշյալ կազմակերպության կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքները: Հաշվետվության մեջ առանձնակի «դատվավոր» տեղ է հատկացված նաեւ Իրանի իսլամական հանրապետությանը, որտեղ, ըստ «Միջազգային նեռում» կազմակերպության, մարդու իրավունքները ոտնահարվում են ամենակոպիտ կերպով: 1991 թվականին «Միջազգային նեռում» կազմակերպությունը նշեց իր հիմնադրման 30-ամյակը: Այդ կապակցությամբ կազմակերպությունը տարեկան հաշվետվության մեջ ներկայացրել է ամենադաժան կցանքների ենթարկված 30 զոհվածների լուսանկարներ: Կազմակերպվել է նաեւ ցուցահանդես՝ 30 հոգու լուսանկարներով, որն ընթացիկ տարվա մեջ, միջազգային հանրության ուշադրությունը գրավելու համար, շրջելու է աշխարհի բոլոր երկրներում: Լուսանկարների ժողովածուի մեջ նշված է նաեւ մի իրանցի կնոջ՝ Նասրին Ռասուլիի անունը (լուսանկար չլինելու դատճառով տպագրված է միայն սեւ կադր), որի տակ գրեթեղված է հետեւյալ նախադասությունը. «Դատապարտվել է մահվան՝ քաղաքական խաղաղասիրական գործունեության համար»:

Հայտնի է, որ Իրանը Իսլամական հեղափոխության հաղթանակից հետո անողոք դայքար ծավալեց քրմությունների եւ քրմադեղերի մաքսանենգության դեմ: Իսկ իշխող վարչակարգի ընդդիմախոսներն ու հակառակորդները հաճախ Իրանին մեղադրում էին, որ երկրում քաղբանտարկյալները մահապատժի են ենթարկվում քրմադեղերի մաքսանենգությամբ զբաղվելու ամբաստանությամբ: Հեղափոխությունից հետո բացարձակ ինքնուրույնության ձգտող Իրանը, հայտնվելով քաղաքական մեկուսացման մեջ, առեղծվածային երկրի համբավ ձեռք բերեց: Օտարերկրացիների հետ խիստ սահմանափակ շփումների հետեւանքով ամենաանհավանական առասպելներ հորինելու համար դարարս հող գոյացավ Իրանում: Ուստի մենք համոզված չենք, որ «Միջազգային նեռում» կազմակերպության հաշվետվության մեջ նշված փաստերն ամբողջությամբ համապատասխանում են իրականությանը:

Լեռնային Ղարաբաղի հայության նկատմամբ կիրառվող հակամարդկային քաղաքականությունը, որը բարձրացվել է դեռական մակարդակի, անշուշտ վրիպել է «Միջազգային նեռում» կազմակերպության տեսադաշտից: Սդրբեջանական բանտերում ահավոր խոշտանգումների օրինակները վեր են մարդկային դատկերացումներից: Համոզված ենք, որ եթե այդ կազմակերպության ներկայացուցիչներին հնարավորություն տվեր ուսումնասիրելու մարդու իրավունքների կացությունը Լեռնային Ղարաբաղում, մոռանալով Իրանը, սրիդված կլինեին դրությունը ներկայացնելու համար մի ամբողջ հատոր կազմել: Ստորեւ ներկայացվող «Միջազգային նեռում» կազմակերպության Իրանի վերաբերյալ հաշվետվության ամփոփ տարբերակը բարգմանվել է Լոնդոնում հրատարակվող «Քեյհան» շաբաթաթերթի հուլիսի 18-ի համարից: Գ.Ս.

Հաշվետվության տեքստը

ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովի հատուկ ներկայացուցիչն առաջին անգամ թույլտվություն ստացավ այցելելու Իրան 1990 թվականի հունվար ամսին, երկրորդ անգամ՝ հոկտեմբերին: Այդ ընթացքում ՌԱՖսանջանիի կառավարությունը խոստացել էր ՄԱԿ-ի ներկայացուցչի կողմից առաջադրված մի շարք հարցերին տալ սպառիչ դատասխան: Սակայն, մինչեւ տարվա վերջ տրված նախագահի դատասխանը հետու էր բավարար լինելուց: Քաղբանտարկյալների ձերբակալման եւ նրանց հետ վարվելակերդի մասին տեղեկություններ ձեռք բերելը, հատկապես երկրի ծայրամասերում, բավականին դժվար է, քանի որ մարդու իրավունքների հարցերով զբաղվող դատասխանատուներին Իրան մուտք գործելն արգելված է:

1990 թվականի սկզբից, կուսակցական դատկանելիության համար Թեհրանի Էվին մեկուսարանում նախնական կալանքի տակ են գտնվում 100 կին: Նրանք ձախ թեքում ունեցող «Թուդե» եւ «Ֆիդայիներ» կուսակցությունների անդամներ են: Կանանց ձերբակալումը տեղի է ունեցել 1983 թվականին՝ մինչեւ նշված կուսակցությունների լուծարումը: Բանտերում գտնվող որոշ կանանց դատը դեռեւս չի կայացել: Մնացյալն էլ բանտային տառադանքներ կրելուց հետո դատադարտվել են փակ դատարաններում: Բանտարկյալներից ոմանք դատավարության ժամկետն անցկացնելով հանդերձ շարունակում են մնալ կալանավայրում: Իշխանությունները բանտարկյալների ազատումը դայմանավորում են նրանց կամ մահադատժի ենթարկված ամուսինների քաղաքական գործունեության վերաբերյալ նախադես դատրաստված խոստովանագրերի ստորագրման հետ: Նրանք ենթարկվում են անլուր խոշտանգումների, եւ համարյա բոլորն էլ զրկված են եղել դատաքննություններից կամ իրավաբան-խորհրդատուներից, օգնություն հայցելու հնարավորությունից: Կալանքի տակ գտնվող կանանցից մոտավորապես 50 հոգի անցյալ տարվա օգոստոսին 10 օրով ազատվեցին: Ոմանց հաջողվեց այդ ժամկետը փոքր-ինչ ավելացնել, բայց մինչեւ դատարանները հոկտեմբեր ամսին վերադառնալ իրենց մեկուսարանները:

Իրանի «Կանանց դեմոկրատական կազմակերպության» նախկին առաջնորդ 75-ամյա Մարիամ Ֆիրուզը, որը բանտարկվել է զաղափարական դայքարի համար, ժամանակավորապես ազատ արձակված կանանց մեջ չէր: Այնուամենայնիվ, ՄԱԿ-ի հատուկ ներկայացուցչին հաջողվեց հոկտեմբերին հանդիպել նրա հետ:

Ռաֆսանջանիին բաց նամակ ուղղած մի խումբ անձինք նույնդես ձերբակալվեցին: 90 հոգու ստորագրությամբ հրապարակված նամակում հեղինակները կառավարությանը քննադատել էին քիչ քաղաքականություն վարելու համար: Նամակի հեղինակներից 20 հոգու ինքնությունը դարզվել է, սակայն ձերբակալվածների թվում կան նաեւ այլ անձինք: Ձերբակալվածներից մի քանիսը Իրանի իսլամական հանրապետության առաջին վարչադետ Մեհդի Բազարգանի գլխավորած «Իրանի ազգային ինքնիշխանության եւ ազատության դաշտդանության» կազմակերպության անդամներն են: Կազմակերպության ղեկավար Մ. Բազարգանը չի կալանավորվել: Սակայն նրա ժամանակավոր կառավարության նախարարներից մի քանիսը՝ 75-ամյա Ալի Աղալանը, որ տառապում է խրոնիկ արյային հիվանդությամբ, 70-ամյա Նուրալի Թաբանդեն եւ ուրիշները 1989 թվականին ձերբակալվածների թվում էին: Նրանցից առնվազն 16 հոգի մինչեւ 1989 թվականի վերջերը բանտարկված էին: Կալանավորներից մի քանիսն էլ ձերբակալության ժամանակ ծանր մարմնական վնասվածքներ են ստացել: Հեռատեսիլով խոստովանությամբ հանդես գալու դահանջով ճնշման ենթարկելու վերաբերյալ կան բազմաթիվ փաստեր: Բանտարկյալներից շատերին անհասու է դեղորայքը, նրանց կյանքը վտանգված է: Նրանք էլ մյուս քաղբանտարկյալների նման զրկված են դատաքննության հետ շփման մեջ մտնելու կամ բողոքարկելու դատեհությունից: «Իրանի ազգային ինքնիշխանության եւ ազատության դաշտդանության» կազմակերպության կողմից հրապարակված ծրագրային դրույթները բնավ էլ չեն հակասում գործող սահմանադրությանը: Այդ ձերբակալումները եւ հիշյալ կազմակերպությունն օրենքից դուրս հայտարարելը քաղաքական ընդդիմության նկատմամբ իշխանությունների անհանդուրժողականության սահմանափակ դրսեւորումներ էլ ավելի են հեղացնում: Նույն տարվա ընթացքում «Մուջահեդներ»՝ կազմակերպության համակիրներից ավելի քան 50 հոգի, առանց արտաքին աշխարհի հետ կապ ունենալու, գտնվում էին մեկուսարաններում: Նույնիսկ նրանց կալանավայրը հայտնի չէր: 1988 թվականից ի վեր նրանցից շատերի մասին տեղեկություն անգամ չկա: Հարյուրավոր այլ անձինք երկրի տարբեր շրջաններում քաղաքական ցույցերին մասնակցելու համար ձերբակալվել եւ բանտարկվել են: Փետրվարին երկու ֆուտբոլային խաղերի հետաձգման դատճառով Թեհրանում տեղի ունեցան խժդժություններ, որոնք վերածեցին քաղաքական ցույցերի: Ցուցարարների եւ ոստիկանության միջեւ տեղի ունեցած բախումների ժամանակ ձերբակալվեցին հարյուրավոր անձինք: Աղրիլին դատճառական մամուլը հրապարակեց Թեհրանի զրոսայգիներից մեկում տեղի ունեցած քաղաքական ցույցերին մասնակցելու մեղադրանքով 60 հոգու ձերբակալման մասին լուր: Ամբողջ տարվա ընթացքում իրանական Քրդիստանում եւ Բելուջիստանում տեղի ունեցող անհանգստություններ եւ դրանց հետեւանքով հարյուրավոր անձանց ձերբակալություններ մասին լուրեր են հրապարակվում: Չի բացառվում, որ ձերբակալվածների մի մասն իրոք զինված հարձակումների կամ քրադեղերի մաքսանենգության մասնակիցներ են: Իրանում քրադեղերի մաքսանենգությամբ զբաղվելու մեղադրանքով կախաղան են բարձրացվել ավելի քան 400 հոգի: Միայն սեդտեմբեր ամսին, ընդամենը երկու շաբաթվա ընթացքում, քրամոլության դեմ դայքարելու մասին իշխանությունների հայտարարությունից հետո, մահադատժի են ենթարկվել 100 հոգի: Խոսակցություններ կան, որ քրեական մեղադրանքներով մահվան դատաղարտված բանտարկյալների մեջ եղել են նաեւ քաղբանտարկյալներ: Օրինակ, դոկտ. Սեփահ Սուլթանի մահադատիժը, որն իրականացվեց հունվար ամսին Քերեջում՝ քրադեղերի մաքսանենգությամբ զբաղվելու կեղծ մեղադրանքով, նրան քաղաքական գործունեության ասպարեզից հեռացնելու նդատակ է հետապնդել:

Դեկտեմբերին, Մեշհեդ քաղաքում Հոսեյն Սուլթանի անվամբ մի քահանա, որն ըստ երեւույթին մեղադրվում էր ուրացման մեջ (Իրանի քրեական օրենսգիրքն ուրացման համար նախատեսում է մահադատիժ), կախաղան բարձրացվեց: Նշենք, որ այդ մահմեդականը 20 տարի առաջ քրիստոնեություն էր ընդունել:

■

Այս զարմանալի, զարմանալի աշխարհը

Իրանի Իսլամական կողմնորոշման նախարարության հրատարակչությունների եւ դրոդագանդայի գլխավոր վարչության կողմից վերջերս Թեհրանում կազմակերպվել էր գրքի ավանդական ցուցահանդես, որի բացման արարողություններին մասնակցում էր նաեւ Իրանի նախկին վարչադետ, քաղաքական հարցերով նախագահի խորհրդատու Միր Հոսեյն Մուսավին: Նա իր ելույթում իրավացիորեն նշեց, որ ցուցահանդեսում ներկայացված հրատարակությունները կառավարության հավանությանն արժանացած հրդարակայնության ու խոսքի ազատության դերաձախս վկաներն են:

Մուսավիի այս արտահայտությունը հիմք է ծառայել Լոնդոնում հրատարակվող ընդդիմադիր «Քեյհան» շաբաթաթերթի մեկնաբան դոկտ. Մոհամմադ Սաբբարիին՝ գրելու մի հոդված, որտեղ նա քննադատության է ենթարկում ոչ հետու անցյալում Սուրբ գրքի գրաքննության փաստը, հիշեցնելով, որ գրաքննությունն Իրանում իր ծաղկման գագաթին էր հասել Մուսավիի կառավարության օրոք: Հոդվածում մասնավորապես գրված է.

«Դեռեւս 1985 թվականին, երբ Միր Հոսեյն Մուսավին հաստատակամորեն քիկն էր տվել վարչադետարանի գահին, Իրանի «Սուրբ գրոց» ասոցիացիան նամակ է հղում իսլամական կողմնորոշման նախարարությանը՝ ավետարանի վերահրատարակման համար թույլտվություն ստանալու խնդրանքով: Հիշյալ նախարարության հրատարակչություններ եւ դրոդագանդայի գլխավոր վարչության դետ Մոհամմադ Դաբիրն խուսանավող դատասխանով հիշեցնում է, թե դարսկերենով կրոնական գրքերի հրատարակման հարցը ներկայումս քննարկվում է: «Սուրբ գրոց» ասոցիացիայի նախագահ Ս. Սեփեհրին գլխավոր վարչությանն ուղղած նամակում հայտնում է իր եւ եկեղեցական խորհրդի անդամների զարմանքն ու ափսոսանքը, նշելով, որ Սուրբ գիրքը շուրջ 1000 տարի է, ինչ ամբողջ աշխարհում հրատարակվել եւ բարգմանվել է ավելի քան 1800 լեզուներով եւ խոսվածքներով, այդ թվում նաեւ դարսկերենով: Սեփեհրին նաեւ հիշեցնում է, թե գլխավոր վարչության դատասխանը հակասում է իսլամական հանրապետության սահմանադրության հիմունքներին, քանի որ քրիստոնեությունը երկրի դաշտոնական կրոններից է...»:

Այնուհետեւ հոդվածագիրը նշում է, որ գրեթե նույն բովանդակությամբ գրություններ են ուղարկվել նաեւ Իրանի հայկական ավետարանական եկեղեցու առաջնորդ Թադեւոս Միհայելյանի, առաջնորդարանի խորհրդի անդամ Վիգեն Մուրադյանի եւ հոգաբարձության անդամ Գուրգեն Հարությունյանի կողմից: Հոդվածագիրը մեկ անգամ եւս անդրադառնալով Մուսավիի հրապարակայնության մասին արտասանած ելույթին, նշում է, թե այդ ժամանակ նախարարների կողմից ընդունվող որոշումներն առանց վարչադետի հավանությանն արժանանալու չէին հրապարակվում:

Թերթի մեկնաբան Սաբբարին իր հոդվածի վերջում, բարձր գնահատելով եկեղեցական գործիչների գործուն քայլերը, չգիտես ինչու, մոռանալով հոդվածի համար հիմք ծառայած Մուսավիի արտահայտությունները, հանկարծ շեղվում եւ գրչի սուր ծայրն ուղղում է Իրանի մեջլիսի հայազգի դատգամավոր Վարդան Վարդանյանին եւ մեղադրում նրան, որ մեկ ամիս առաջ իր դատգամավորական կարիերայի չորս տարիների ընթացքում արտասանած առաջին եւ հավանաբար մերձին ելույթում նման երեւույթների մասին խոսելու փոխարեն, վերհիշում է այս տարվա աղրիլ ամիսը եւ Թուրքիայում հայոց ցեղասպանության 76-ամյակը: Պատգամավորի ելույթում հնչած *«Աղրիլի 24-ը քրական կառավարության դեմ համայն հայության դահանջատիրության եւ բողոքի օրն է»* արտահայտությունը թույլ է տվել թերթի մեկնաբանին լոնդոնյան իր մեռուստաս գրասենյակից խրատական քարոզներ ուղղել հայազգի դատգամավորին եւ Սուրբ գրքի հրատարակման հետ ոչ մի աղերս չունեցող արտահայտության համար ասել հետեւյալը. *«Թվում է, թե մեջլիսի դատգամավորը բնավ էլ իսլամական Իրանի քաղաքացի չէ, եւ կարծես առհասարակ տեղյակ չէ համայնքի կրոնական եւ քաղաքական գործիչների չափավոր, սակայն իրավացի բողոքներին, եւ Իրանի փոքրամասնությունների դեմ կիրառվող ճնշումները բացահայտելու փոխարեն, ավելի հրատաղ է համարում անդրադառնալ 76 տարի առաջ Թուրքիայում տեղի ունեցած դեպքերին»:* Սաբբարին իր հոդվածի վերջում գրում է. *«Ինչ տարօրինակ աշխարհ է»:*

Համաձայն չլինելով հանդերձ Սաբբարիի այն դնդումներին, թե ի՞նչ կարիք կա վերհիշելու 76 տարի առաջ տեղի ունեցած ցեղասպանությունը *(այդ հարցն ավելի քան հրատաղ է, քանզի ցեղասպանությունը կրկնվում է նաեւ մեր օրերում-Գ. Ս.)*, համեստաբար կրկնում ենք՝ ի՞նչ տարօրինակ աշխարհ է:

Գ. ՍՈՒՍԱՐԵՅՈՆ

digitised by A.R.A.R.@

ՔՈՒՎԵՅԹ. եսպատերազմյան օրեր

Մի տարի հետո ամեն ինչ առաջվա նման է կամ ոչ մի բան առաջվա նման չէ: Նավթահորերը դեռեւս վառվում են: Երկիրն ադրում է դանդաղեցված ընթացքով. պաղեստինցիները, որ առանցքային տեղեր էին գրավում, անցանկալի են: Ոմանք երազում են ժողովրդավարության մասին:

Ֆրանսիական «Լը Պուենթ» շաբաթաթերթն այստեղ է ներկայացնում Քուվեյթը Ծոցի պատերազմից ուղիղ մեկ տարի հետո:

Զասագրումից, 1991 թ. փետրվարի 27-ից, հինգ ամիս հետո Քուվեյթն այնուամենայնիվ մտաբերում է, որ ինքը բուժվում է: Մի տարի առաջ, 1990 թ. օգոստոսի 2-ին, արեւածագին, համայն աշխարհը ակնատես եղավ Սադդամ Հուսեյնի բանաբարքներին, ինքն իրեն հարց տալով, թե իսկապես պե՞տք է կյանքը տալ Քուվեյթի համար: Մի տարի հետո նույն հարցն է ծառանում: Երկիրը պիտի վերակառուցել, սակայն մայրաքաղաք Քուվեյթը նմանվում է դատարկ քաղաքի. 2,1 մլն բնակչությունից հազիվ 800 հազարն են այս պահին այնտեղ: Մնացածները կամ դեռ չեն վերադարձել, կամ էլ երկար արձակուրդների են մեկնել Եւրոպա, սղասելով, որ իրենց փոխարեն ուրիշներն կարգի բերեն երկիրը: Մի տարի է, ինչ շաս քուվեյթցիներ նախընտրում են ոսկե ափսորը ազգային ճակատագրի անհարմար պատահականություններից: Քուվեյթցիները չեն սիրում ձեռքերը շաս կեղտոտել: Նրանք վարժվել են, որ ուրիշներն անեն իրենց փոխարեն:

Վերաբացված *Մերիդիան* հյուրանոցի սրահում երկու Ֆիլիպինցի կլիմայափոխիչներ են տեղադրում, մինչդեռ էմիր Զաբերի եւ գահաժառանգի նկարներն արդեն կախված են պատերից, ինչպես առաջ: Իրաքցիների կողմից նահանջից առաջ թալանված խրդուկ կրպակների մեծ մասը փակ են: Սակայն փառահեղ կրպակներն արդեն բացվել են, ինչպես առաջ: Երեկոյան հովին, երբ շոգը ընդամենը 30 աստիճան է, քուվեյթցիները տրվում են իրենց սիրած հաճույքին: *Մերսեդեսներով* պտտվում են ծովափներին: Կանայք իրենք են վարում մեքենաները, այնքան էլ ուշադրություն չդարձնելով իսլամական ձեւով հանգնվելուն: Խստադեմ Սաուդական Արաբիայի կողքին Քուվեյթը որոշ չափով հիշեցնում է Կալիֆոռնիան: 20 կմ այն կողմ Ալ Ահմադի նավթահորերը վառվում են: Սակայն երես առած երեխայի նման այս ժողովուրդը կարծես թե մոռացել է, որ պատմությունը կարող է ողբերգական լինել: Սակայն դա լոկ արտաքուստ է:

Շատերի նման Զիադը, քուվեյթյան ոսկե երիտասարդության ներկայացուցիչներից մեկը, որը սակայն չփախավ երկրից պատերազմի ընթացքում, իրեն նվաստացած էր զգում, տեսնելով, թե ինչպես են իրաքցիները Քուվեյթ մտնում, կարծես սեփական տունը լինի, իսկ երկրի ղեկավարությունը որեւէ դիմադրություն ցույց չէր տալիս: Նա չհասկացավ նաեւ, թե ինչու հենց առաջին կրակոցից հետո ամսոր անհետացած էմիր Զաբերը խելամիտ գտավ նոր կաբինետում վերանշանակել ազատագրումից, 1991 թ. փետրվարի 27-ից, հինգ ամիս հետո Քուվեյթն այնուամենայնիվ մտաբերում է, որ ինքը բուժվում է: Մի տարի առաջ, 1990 թ. օգոստոսի 2-ին, արեւածագին, համայն աշխարհը ականատես եղավ Սադդամ Հուսեյնի բանաբարքներին, ինքն իրեն հարց տալով, թե իսկապես պե՞տք է կյանքը տալ Քուվեյթի համար: Մի տարի հետո նույն հարցն է ծառանում: Երկիրը պիտի վերակառուցել, սակայն մայրաքաղաք Քուվեյթը նմանվում է դատարկ քաղաքի. 2,1 մլն բնակչությունից հազիվ 800 հազարն են այս պահին այնտեղ: Մնացածները կամ դեռ չեն վերադարձել, կամ էլ երկար արձակուրդների են մեկնել Եւրոպա, սղասելով, որ իրենց փոխարեն ուրիշներն կարգի բերեն երկիրը: Մի տարի է, ինչ շաս քուվեյթցիներ նախընտրում են ոսկե ափսորը ազգային ճակատագրի անհարմար պատահականություններից: Քուվեյթցիները չեն սիրում ձեռքերը շաս կեղտոտել: Նրանք վարժվել են, որ ուրիշներն անեն իրենց փոխարեն:

Վերաբացված *Մերիդիան* հյուրանոցի սրահում երկու Ֆիլիպինցի կլիմայափոխիչներ են տեղադրում, մինչդեռ էմիր Զաբերի եւ գահաժառանգի նկարներն արդեն կախված են պատերից, ինչպես առաջ: Իրաքցիների կողմից նահանջից առաջ թալանված խրդուկ կրպակների մեծ մասը փակ են: Սակայն փառահեղ կրպակներն արդեն բացվել են, ինչպես առաջ: Երեկոյան հովին, երբ շոգը ընդամենը 30 աստիճան է, քուվեյթցիները տրվում են իրենց սիրած հաճույքին: *Մերսեդեսներով* պտտվում են ծովափներին: Կանայք իրենք են վարում մեքենաները, այնքան էլ ուշադրություն չդարձնելով իսլամական ձեւով հանգնվելուն: Խստադեմ Սաուդական Արաբիայի կողքին Քուվեյթը որոշ չափով հիշեցնում է Կալիֆոռնիան: 20 կմ այն կողմ Ալ Ահմադի նավթահորերը վառվում են: Սակայն երես առած երեխայի նման այս ժողովուրդը կարծես թե մոռացել է, որ պատմությունը կարող է ողբերգական լինել: Սակայն դա լոկ արտաքուստ է:

Շատերի նման Զիադը, քուվեյթյան ոսկե երիտասարդության ներկայացուցիչներից մեկը, որը սակայն չփախավ երկրից պատերազմի ընթացքում, իրեն նվաստացած էր զգում, տեսնելով, թե ինչպես են իրաքցիները Քուվեյթ մտնում, կարծես սեփական տունը լինի, իսկ երկրի ղեկավարությունը որեւէ դիմադրություն ցույց չէր տալիս: Նա չհասկացավ նաեւ, թե ինչու հենց առաջին կրակոցից հետո ամսոր անհետացած էմիր Զաբերը խելամիտ գտավ նոր կաբինետում վերանշանակել պաշտպանության եւ ներքին գործերի նախկին նախարարներին, որոնք քուվեյթցիների աչքում մեղավոր են պարտության մեջ: Զիադը հիշում է նաեւ, թե օկուպացիայի ժամանակ ճնշված ժողովուրդն ինչպես էր համբերախ, ինչպես էր նրանց համակել նույն հոգին պատկանելու զգացումը: Նա չի մոռացել, թե ինչպես երեկոները ժամեր շարունակ

խոսում էին ժողովրդավարության, երբ Քուվեյթն ազատագրվի, խորհրդարանի եւ 1962 սահմանադրության վերահաստատման մասին: *«Ազատ Քուվեյթ» ռադիոկայանը, որ հաղորդումներ էր տալիս Սաուդական Արաբիայից, գրեթե ամեն երեկո դրա մասին էր խոսում,* հիշում է նա: *Սակայն ոչինչ էլ չեղավ»:*

Ոչ բոլորովին. էմիրը խոստացել է 1992 թ. աշնանը ընտրություններ անցկացնել: Սակայն ի՞նչ են նշանակում ընտրությունները մի երկրում, որի 2 մլն բնակչությունից քուվեյթցի են 800 հազարը, որոնցից ընտրելու իրավունք ունեցողներ՝ լոկ 85 հազար: Իսկապես, միայն այն տղամարդիկ, որոնք կարող են հաստատել, թե իրենք սերում են 1920 թ. ապրիլի 1-ին Քուվեյթում ապրած նախնիներից, ընտրելու իրավունք ունեն: Իսկ եթե կանանց ընտրելու իրավունք տվի՞ն: *«Անհնարին է,* պատասխանում է մի դիվանագետ: *Պատկերացնո՞ւմ եք, թե Սաուդյան Արաբիան ինչպես կրթվի: Պետք չէ երազներ փայփայել. Քուվեյթը չի կարող դեմոկրատական ծաղիկ լինել ազատությունների անապատի մեջ»:*

Պատերազմի ցնցումը, ժողովրդի կիսվելը ներքին եւ աֆսորյալ «դիմադրողների» այլ հակասություններ վեր հանեցին, որոնք գոյություն ունեին դեռ 1990 թ. օգոստոսի 2-ից առաջ: Հակասություններ հարուստների, որ օսար երկրներում, բեղ՝ հյուրանոցներում յոթ ամիս շարունակ անցկացնելու միջոցներ ունեն, եւ նրանց միջեւ, որոնք դրա մասին մտածելու իսկ ժամանակ չունեն: 800 հազար քուվեյթցիների եւ բոլոր մնացյալների՝ պաղեստինցիների, Ֆիլիպինցիների, պակիստանցիների, շրիլանկացիների եւ այլոց միջեւ, որոնք երկիրն իրենց ուսերի վրա են տանում: Նրանց միջեւ, ովքեր բավարարված են եղած կարգերից եւ նրանց, ովքեր պահանջում են ավելի շաս ժողովրդավարություն: Եւ առանձնապես նրանց, ովքեր ոչ մի դաս չեն քաղել ու պատրաստ են ամեն ինչ վերսկսել առաջվա նման եւ նրանց, ովքեր վախենում են պատմական պահը բաց թողնել: *«Ոչ ոք չի պահանջում Ալ Սաբահ ընտանիքի հրաժարականը,* բացատրում է ընդդիմադիրների օրգան *«Ալ Քաբաս»* թերթի խմբագիր Մոհամեդ ալ Սաժեր: *Սակայն կառավարման այս ձեւը, որն արդեն շունչը փչում էր ներխուժումից առաջ, երկար չի կարող տեւել: Քուվեյթը կարիք ունի իր ատաղձայի նոր տեսլականի, Քուվեյթը կարիք ունի ժողովրդավարության: Մենք ոսկե առիթ ունենք սկսելու այդ փոփոխությունները: Սակայն ոչ ոք այն չպահեց»:*

Եվ, չփոխվելու պատճառով, Քուվեյթը քավության նոխազ գտավ ի դեմս... պաղեստինցիների: Սրանց հանցա՞նքը. որ հավատացել էին Սադդամ Հուսեյնի գլուխգովանությանը, մի քանիսն էլ՝ համագործակցել իրաքցի թշնամու հետ: Ռազմական օրենքի վերացումից հետո, պատիժներն ու գնդակահարությունները, փառք աստծո, դադարեցին: *«Քուվեյթցիները նախեւառաջ գործի մարդ են: Նրանք լավ գիտեն, որ արյունը փախցնում է փողը»,* մեկնաբանում է մի դիվանագետ: Սակայն տնտեսության «քուվեյթացման» անվան տակ էսպաֆեսը վերցրել է սիստեմատիկ մաքրման քաղաքականությունը, երկիրը պաղեստինցիներից մաքրելու պաշտոնական պատճառաբանությամբ: Թվերը խոսում են իրենք իրենց: Պատերազմից առաջ պաղեստինցիները 400 հազարից ավելի էին: Ազատագրման ժամանակ՝ արդեն 160 հազար: Այսօր 100-120 հազար են մնացել եւ նրանց դուրս բերելու առիթը բաց չի թողնվում: Մարդկանց կամայականորեն ազատում են աշխատանքից, ստիպում մեկնել երկրից:

Նախարարություններում, սակայն, թվային հաշվարկներ են անում 1,2 միլիոնանոց Քուվեյթ ստեղծելու վերաբերյալ, հակառակ նախապատերազմյան 2,1 միլիոնի: Սակայն, մի՞թե սա կենսունակ է, երբ քուվեյթցիները գործում բնակչության լոկ 15-20 տոկոսն են կազմում: Երբ չորս պաղեստինցիներից երեքն արդեն մեկնել են, հրաշք պիտի լինի, որ Քուվեյթը տեղից շարժվի: Պաղեստինցիները ըզբաղեցնում էին երկրի տնտեսության առանցքային կետերը՝ բանկային ու առեւտրական ծառայողներ, բժիշկներ ու ուսուցիչներ: Եւ չի երեւում, թե ո՞վ կարող է նրանց փոխարինել: Նրանց 60 տոկոսը վարչական աշխատողներ էին: Ի՞նչ պիտի լինի վաղը, երբ բոլորը իսկապես վերադառնան եւ երկիրն սկսի ամբողջ թափով աշխատել. օրական արտահանել 900 հազար տակառ նավթ այսօրվա 44 հազարի փոխարեն: *«Դա իսկական փորձություն պիտի լինի,* պատասխանում է մի տնտեսական փորձագետ: *Այս պահին երկիրն աշխատում է դանդաղեցված: Եւ ավելացնում. Քուվեյթն այսօր մի հսկա հիմնարկ է, որի վերջին հարկում քուվեյթցի ղեկավարությունն է, տեղավորված շքեղ գրասենյակներում, ամենաներքեւում եգիպտացի մի դրոնաղաղ, մնացած հարկերում ոչ ոք»:* ■

ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՒԵԼՔ. սպասվելիք հրաշք

Շամիրը Ասադին համեմատում է Սադաթի հետ: Եթե ոչ մի բան չխոչընդոտի, իսրայելցիներն ու արաբները կբանակցեն ուղղակիորեն

Փոփոխություններով լեցուն այս աշխարհում որեւէ բան պիտի շարժվի՞ Մեծավոր Արեւելքում: *«Պատմական այնպիսի հնարավորության շեմին եմ,* ինչպես կրկնում է Իցհակ Շամիրը, *երբ Իսրայելն ու արաբական երկրները կսկսեն ուղղակիորեն բանակցել»:* Խնդիրն այն է, թե այս շեմը կանցնե՞նք: Շամիրը, որին իր երկար կարիերայի ընթացքում երբեւէ այսպես ժպտուն ու խոսքառաս չէինք տեսել, խոսում է Միրիայում *«հեղափոխական փոփոխությունների»* մասին: Նա նույնիսկ Հաֆեզ Ասադին համեմատում է Քեմալ Դեյվիդի համաձայնագրի կնքողներից մեկի՝ նախագահ Անուար Սադաթի հետ. սա լավագույն գովասանքն է, որ կարելի է լսել որեւէ իսրայելցու շրթներից: Արդյունքը՝ եթե վերջին դժվարությունները, այսինքն՝ պաղեստինյան պատգամավորության կազմումը, հաղթահարվեն, երկու-երեք ամսից ներկա կլինենք մի չընտեսնված «հրաշք»ի՝ Իսրայելի եւ նրա արաբ հարեւանների միջեւ խաղաղության խորհրդաժողովի:

Պայմանով, որ Լիկուդի կարծրները չպարտադրեն Շամիրին խոստացնել տոնը, պայմանով նաեւ, որ որոշ երկրներ, ինչպես Ֆրանսիան, շաս չջանան վերի վրա աղ լցնել՝ Պաղեստինի ազատագրության կազմակերպությանը (ՊԱԿ) մղելով համառել Արեւելյան Երուսաղեմի ներկայացուցչության վերաբերյալ. գիտենք թե դեպքերն ինչպես կծավալվեն: Բանակցություններին ներկա կլինեն յոթ-ութ պետության ղեկավարներ կամ արտգործնախարարներ. Միացյալ Նահանգների, Խ. Միության, Իսրայելի, Եգիպտոսի, Սիրիայի, Հորդանանի եւ Լիբանանի պատասխանատուներ: Եւրոպական ընկերակցությունն ու ՄԱԿ-ն էլ ներկայացված կլինեն «կրավորական» մի դիտորդով: Խորհրդաժողովի լիագումար նիստերը պետք է տեւեն քառասունութ ժամ: Դրանից մի քանի օր անց կսկսեն աշխատել բազմաթիվ հանձնաժողովներ: Գլխավոր երկու հանձնաժողովները կլինեն Իսրայելի եւ Սիրիայի եւ Իսրայելի ու հորդանանա-պաղեստինյան պատվիրակության միջեւ բանակցություններ վարողները: Սակայն կլինեն այլ հանձնաժողովներ, որոնք կքննարկեն Իսրայելի եւ Լիբանանի կամ էլ Սաուդյան Արաբիայի հետ հարաբերությունները, արծարծելով շրջանային խնդիրներ՝ զենքի կրճատումն ու ջրի պաշարները...



Բոլոր դեպքերում, այս հանձնաժողովներում Իսրայելի բարձր պաշտոնյաներն առաջին անգամ պետք է գտնվեն երես առ երես արաբ պատվիրակների դիմաց: ՄԱԿ-ի անվտանգության խորհուրդը չի կարող խառնվել բանակցություններին: Այս ամենը մղում են Իցհակ Շամիրին ասելու, թե՝ *«Մենք ձեռք բերեցինք այն, ինչ միշտ պահանջում էինք. ուղղակի բանակցություններ...»:*

Այս պահանջը հաճախ դիտվում էր որպես մահաձություն, ավելին՝ որպես բանակցությունների ցանկացած ծրագիր սառեցնելու պատրվակ: Շամիրն իր հերթին այն արդարացնում էր, պատճառաբանելով, թե նախ եւ առաջ հարկավոր է պարզել Իսրայելի հետ խաղաղ գոյակցելու արաբ ղեկավարների ցանկությունը: Դրա համար է նա միշտ համառորեն ընդդիմացել ՄԱԿ-ի հովանու տակ բանակցությունների կամ Միջազգային խորհրդաժողովի ցանկացած գաղափարին: Այսօր Իսրայելի վարչապետը կարող է ասել, որ իր համառությունը փոխհատուցվեց. Սիրիայի նախագահ Ասադը անցավ ֆնությունը:

Ճիշտ է, Իցհակ Շամիրը երկար ժամանակ կասկածում էր: Չէ՞ որ Սիրիան տարիներ ի վեր Իսրայելի քիվ մեկ թշնամին էր. երկիր, որ անդադար կուսակում էր ռազմական պատրաստներ եւ որի ղեկավարը որակվում էր որպես իրաքցի Սադդամ Հուսեյնի «երկվորյակ»... Համոզվելու համար, որ նախագահ Ասադը վերջնականապես «a la Սադաթ» փոխակերպություն է արդում, Իցհակ Շամիրը չբավարարվեց լոկ ամերիկացիների երաշխիքներով: Նա վերջնականապես համոզվեց, երբ այդ երաշխիքները հաստատվեցին իսրայելական բանակի հետախուզական ծառայությունների կողմից: Այդ զեկույցները հավաստում են, որ նախագահ Ասադը փոխել է ընթացքը, խորհրդային իր խնամակալի բուլացումից դասեր քաղել եւ վճռականորեն կանգնել Միացյալ Նահանգների ժամքարում: Ներկայումս նա ջանում է սիրիական իշխանություններին տեղեկացնել հրեական պետության նկատմամբ քաղաքական իր նոր գիծը: Իմիջիայլոց, իսրայելցիներն այդ փոփոխության լավագույն օրինակը տեսան ամերիկյան հեռուստատեսային մի հարցազրույցի ժամանակ, ուր սիրիական մի դիվանագետ առանց երկիմաստության նշույլի արտահայտվում էր Իսրայելի հետ ուղղակի բանակցությունների մեջ մտնելու օգտին...

Իցհակ Շամիրը Բեգինից հետո կդառնա՞ Իսրայելի երկրորդ ղեկավարը, որ խաղաղություն կհաստատի արաբական երկրի հետ: Պետք է զգույշ լինել: Առավել եւս, քանզի վարչապետը անդրդվելի է մնում Գոլանի բարձունքում եւ գրավյալ այլ տարածքներում նոր բնակավայրեր հիմնելու Իսրայելի իրավունքի հարցում: Կարճ ասած, իսրայելական կառավարության ղեկավարը պետք է ապացուցի, որ իր համառությունը փոխհատուցվում է իր մեծ սկզբունքներից մեկ ուրիշով. *«Խաղաղություն ոչ թե տարածքների, այլ խաղաղության դիմաց»:*

«Լը Պուենթ», 2 օգոստոս 1991

Գիտաժողով՝ նվիրված Լոզանի պայմանագրի 68-րդ տարեդարձին

Միացյալ Նահանգները մինչեւ հիմա չեն ստորագրել այն

Այս տարի լրանում է Լոզանի պայմանագրի կնքման 68-րդ ամյակը: Այդ առթիվ թուրք իրավաբան կանանց միությունը հուլիսի 25-ին Ստամբուլում գիտաժողով էր կազմակերպել, որին մասնակցում էին Թուրքիայի արտգործնախարար Սաֆա Գիրայը, սոցիալ-դեմոկրատական ժողովրդական կուսակցության գլխավոր նախագահ էրդալ Ինյոնյուն, «Ճշմարիտ ուղի» կուսակցության ղեկավար Սուլեյման Դեմիրելը եւ պաշտոնական այլ անձինք: Ելույթ ունենալով գիտաժողովում Դեմիրելն ու Ինյոնյուն նշեցին, որ Լոզանի պայմանագիրը Թուրքիայի համար պահպանում է իր այժմեականությունը:

Հարցի էությունը կայանում է նրանում, որ որոշ քաղաքական գործիչներ Լոզանի պայմանագրի կնքման առթիվ սկսել են մեղադրել Աթաթուրքին ավելորդ հողային զիջումներ անելու մեջ: Նրանց կարծիքով Թուրքիան կարող էր իր ձեռքում պահել գոնե Մոսուլի նահանգը: Սիա Սուլեյման Դեմիրելը իր ելույթում պատասխանելով Լոզանի առթիվ Աթաթուրքի հասցեին ուղղված մեղադրանքներին ասել է. **«Մի՞թե Մուսաֆա Քեմալ Աթաթուրքը չէր ցանկանում վերցնել նաեւ Մոսուլը: Նա, իհարկե, ցանկանում էր: Սակայն այդ ժամանակներում Թուրքիան պայքարում էր ծնվելու համար Շեյխ Սաիդի ապստամբությունը»:** Ինչպես տեսնում եք, Դեմիրելը փաստորեն արդարացնելով Աթաթուրքին, մեղադրանքն ուղղում է նրդ ապստամբներին:

Անդրադառնալով նույն հարցին, էրդալ Ինյոնյուն ասել է հետեւյալը. **«Նոր սերնդի քաղաքական գործիչներից ոմանք Լոզանի պայմանագրի առթիվ քննադատական մոտեցում են դրսեւորում՝ ասելով, թե պայմանագրով ավելորդ հողային զիջումներ է արվել: Մինչդեռ հին սերնդի գործիչները, ճիշտ գնահատելով Լոզանի պայմանագրի նշանակությունը, Թուրքիայի համար շարունակում են արտահայտել իրենց հիացմունքը: Չպետք է մոռանալ, որ պատմությունը չի կրկնվում»:** Հատկանշական է, որ ԱՍՆ-ը լինելով Թուրքիայի դաշնակիցը, մինչեւ օրս չի վավերացրել Լոզանի պայմանագիրը:

digitised by A.R.A.R.@

«Արեւմուտքի նպատակը Հայաստանի ստեղծումն է», հայտարարում է Թուրքերը

Դիարբաքրի արյունալի իրադարձությունները, որոնց անդրադարձել էր «Ազգ»ը նախավերջին համարում, Թուրքիայում նոր արձագանքներ են գտնում: Բնութագրելով դրանք *«Ընդոստություն ընդդեմ Թուրքական պետության»* կամ *«Քաղաքացիական պատերազմի փորձարկում անջատողականների կողմից»* արտահայտություններով, *«Թերջուման»*ը գրում է, որ *«Արեւմուտքը Թուրքիայի հետ սարսափելի խաղ է խաղում»*: Ըստ նրա, ներկայումս Թուրքիան հայտնվել է այնպիսի իրավիճակում, ինչպիսին էր Սեւրի պայմանագրի նախօրյակին եւ պատահական չէ, որ իրադարձությունները տեղի ունեցան *«Քրդական պետության ստեղծման ուղղությամբ վերջնական քայլեր կատարող Քրդ Բուշի այցի նախօրյակին»*:

Ամբողջ թափով շարունակվում են նաեւ հարձակումները Եւրոպայում Թուրքական ներկայացուցչությունների վրա: Թուրքական մամուլը հիմա արդեն բացահայտ գրում է, որ այդ հարձակումներին, բացի քրդական կազմակերպություններից, մասնակցում են նաեւ *Դեւ-սոլի* խմբավորումները:

Դիարբաքրի իրադարձությունները միա-

ժամանակ բնորոշվում են ենթարկվում նախարարների խորհրդի նիստում, եւ օրակարգում դրվում է ժողովրդի աճխատանքային կուսակցությունը լուծարելու հարցը: Ելույթ ունենալով նիստում, վարչապետ Մեսութ Յըլմազը մեղադրանքներ է ներկայացնում Քրդիստանի բանվորական կուսակցության հասցեին, որոնց ջոկատներին նա անվանում է ավազակախմբեր: Իսկ երկրի ընդդիմադիր կուսակցությունների ղեկավարները, ընդհանուր առմամբ մեղադրելով հանդերձ պետական մարմիններին, իրադարձությունների առթիվ հանդես են գալիս յուրովի մեկնաբանություններով: Այդ առումով, թերեւս, ամենաարտօրինակ մոտեցումը դրսեւորում է Ալփարսլան Թյուրքեշը: Նա ժողովրդի աճխատանքային կուսակցության Դիարբաքրի նահանգային վարչության նախագահ Վեղաք Այդընի թաղման արարողության ժամանակ տեղի ունեցած ընդհարումները խաղաղ բնակչության եւ ոստիկանության միջեւ բացատրում է անջատողականների սադրիչ գործողություններով եւ առանց այլեւայլի հայտարարում, թե անջատողական շարժումները Թուրքիայում հրահրում են Արեւմուտքի կողմից հովանավորվող հայկական կազմակերպությունները:

Եթե մի կողմ թողնենք հայկական գործոնը, արդա կարելի է ասել, որ Թյուրքեշի տեսակետները իրադարձությունների գնահատման հարցում գրեթե նույնն են, ինչ «Թերջուման»ինը: Պատահական չէ, որ հենց «Թերջուման»ն էլ հարցազրույց է անցկացրել նրա հետ եւ այն հրապարակել *«Արեւմուտքի նպատակը Հայաստանի ստեղծումն է»* վերնագրով: Պատասխանելով թղթակցի հարցերին, Թյուրքեշն արտահայտել է այն կարծիքը, թե Դիարբաքրի իրադարձությունները ոչ այլ ինչ են, եթե ոչ իմպերիալիզմի ու անջատողականության մի նոր դրսեւորում: *«Նման սադրանքներ երկրում,- ասել է նա,- վաղուց ի վեր հրահրվում են: Թուրքիայում ծավալվող անջատողական շարժումների գլխավոր պատասխանատու հարգարժան Օզալն է: Անջատողական շարժումների դեմ, որոնք սկսած 1983 թվից գլուխ են բարձրացրել երկրում եւ դեկավարվում են արտասահմանից, Օզալը ոչ մի միջոց չի ձեռնարկում, դեռ ավելին՝ չի էլ թողնում, որ ձեռնարկեն»*:

Վերոհիշյալ իրադարձությունները սերտորեն կապելով Արեւմուտքի սադրիչ գործողությունների հետ, Թյուրքեշը նշում է. *«Երկրում ծավալվող անջատողական շարժումների թիկունքում կանգնած են հունական եւ հայկական կազմակերպություններն ու նրանց հովանավորող Արեւմտյան մեծ տերությունները: Նրանք նպատակ ունեն հետզհետե հզորացող Թուրքիան թուլացնելու, երկրում խժդժություններ սարքելու միջոցով Կիպրոսն ու Էգեյան ծովը հանձնել Հունաստանին, Թուրքիայի հարավային նահանգները մինչեւ Տավրոս տալ Միրիայի տնօրինության տակ, այսպիսով ապահովել իմպերիալիզմի գերիշխանությունը նավթով հարուստ այնպիսի շրջաններում, ինչպիսիք են Քերքուկը, Մոսուլն ու Հարավային Անատոլիան: Բացի այդ, Մերձավոր Արեւելքի մահմեդական երկրներն ու Թուրքիան շահագործելու համար նրանք մտադրվել են նաեւ հսկողություն սահմանել առնվազն նավթի չափ ստրատեգիական նշանակություն ձեռք բերող ջրի պաշարների վրա»*:

Այնուհետեւ, Ալփարսլան Թյուրքեշը արտահայտում է այն միտքը, թե *«Արեւմուտքը սեղ խելով հրդեհի եւ թուրքերի միջեւ հրդեհական մարիոնետային պետություն ստեղծելու մտադրությամբ, եղբայրասպան կռիվներ է հրահրում»*: Նրա կարծիքով, այսպես կոչված Քրդական պետությունը հետագայում Արեւմուտքի կողմից *«որպես ռազմական ուժ օգտագործվելու է արաբների եւ Թուրքիայի դեմ, քանի որ բուն նպատակը Մեծ Հայաստանի ստեղծումն է»*:

Ծանոթանալով Արեւմուտքի կողմից Մեծ Հայաստանի ստեղծման վերաբերյալ Ալփարսլան Թյուրքեշի հայտարարությունների հետ, կամա-ակամա ուզում ես հավատալ դրանց ճշմարտացիությանը: Բայց չէ՞ որ հենց նույն Արեւմուտքը նպաստեց Սեւրի փոխարինմանը Լոզանով, Արեւմուտքը այլ փակեց Կիպրոսի գրավմանը թուրքական զորքերի կողմից: Ի վերջո, ՆԱՏՕ-ի անդամ երկրների կազմում ԱՄՆ-ից հետո թվաքանակով ամենամեծը հանդիսացող թուրքական բանակը հենց Արեւմուտքի կողմից է զինվում, միլիարդների հասնող տնտեսական օգնությունը Թուրքիան ստանում է Արեւմուտքից:

Մեծ Հայաստանի ստեղծման վերաբերյալ Ալփարսլան Թյուրքեշի մտավախությունները չեն կարող լինել նրա ներքին համոզմունքների արդյունքը: Չունենալով որեւէ լուրջ ծրագիր, նա պարզապես դժվարանում է պաշտպանել մակարդակով մասնակցել հանուն իշխանության երկրում ծավալվող քաղաքական պայքարին: Այդ իսկ պատճառով էլ շրջանառության մեջ է դնում Հայաստանի անունը շահարկման առարկա դարձնելու, թեկուզ եւ ոչ կշռադատված արտահայտություններով Թուրքիայի աղազայի հանդեպ մտահոգություն ցուցաբերելու պանթյուրիստի փորձված մեթոդները, որպեսզի հնարավորություն ստանա ընտրողների մեջ սիրաշահել գոնե ազգայնամոլ տարրերին: Չէ որ Մեսութ Յըլմազի իշխանության գլուխ գալուց հետո արտահերթ ընտրությունների մասին խոսակցությունները Թուրքիայում հաճախակի են դարձել:

Դավիթ ՀՍԱՔՅԱՆ

Apple - IBM. հաշվով ամուսնություն

Մի քանի համակարգիչների համաշխարհային երկու խոշորագույն արտադրողների ամբարտավանության վերջը եկավ: Apple-ը տասը տարի շարունակ իրեն համարում էր լավագույնը, IBM-ը՝ նույնպես: Դա նաեւ միկրոտեղեկագիտության ինդուստրիայի մի նոր դարաշրջանի սկիզբն է: Երկու մեծերը պաշտոնապես հայտարարել են, որ իրենք մշտապես հայտարարել են, որ իրենք մշտապես համագործակցել առաջիկա տարիներին այնպիսի համակարգիչների արտադրության բնագավառում, որոնք կգոյատեւեն թե՛ մեկի եւ թե՛ մյուսի մեքենաների լավագույն որակները:

Համաձայնագիրը պետք է ստորագրվի մինչեւ ամառվա վերջը:



Պարզաբանենք. IBM-ը խոստովանում է, որ իր մրցակցի հմտությունն անգերազանցելի է: IBM-ը ի վերջո հասկացավ, որ Apple-ի տեխնիկական նվաճումները արժանի են ընդօրինակման... Այս անգամ թվում է, որ IBM-ը իրոք ընտրել է իր ուղին, գրում է ամերիկյան «Infoworld» մասնագիտացված շաբաթաթերթի գլխավոր խմբագիր Սյուզան Օլսոնը: Նույն ձեւով Apple-ը կարծում է, որ իր լավագույն որակներով հանդերձ ինքը չի կարող միայնակ առաջադիմել ներկայումս անհատական տեղեկագիտության մեջ տիրող ածի պայմաններում: IBM-ի վաճառահանման հմտության եւ ուժի վրա հենվելը կարեւոր հաղթաթուղթ է:

Էլ ավելի կարեւոր է այն, որ երկու մեծերը հասկացել են, որ 90-ական թվականներին շուկան 80-ականների շուկայի նման չի լինելու: Տեղեկագիտության ամենազորությունը մոտենում է իր վախճանին: Այսուհետեւ, սպառողը, լինի առանձին, թե ձեռնարկությունում, պահանջում է, որ ինքը կարողանա իր համակարգիչն օգտագործել գրեթե նույնքան հասարակ ձեւով, որքան հեռախոսը:

Եւ սա Apple-ի եւ իր «Macintosh»-ի ամենաուժեղ կողմն է: Մանավանդ, Ջոն Սքալիի գլխավորած այդ ընկերության ամենավերջին նորույթների լույսով դա «Quick Time» անունն ստացած ծրագիրն է, որը տեսաժապավենը համակարգչին է հարմարեցնում առանց լրացուցիչ ջանքերի: Այդ տպավորիչ փոփոխությունը, անշուշտ, անտարբեր չթողեց IBM-ին, որը, սակայն, ոչնչով չկարողացավ պատասխանել:

Համակարգիչը նախ եւ առաջ միկրոպրոցեսորներն են: Բայց միայն միկրոպրոցեսորն այնքանով է արժեքավոր, որքան խաղաքարտերի կապուկը, եթե դրա չգիտեք ոչ մի խաղի կանոն եւ նույնիսկ քարտերից յուրաքանչյուրի իմաստը:

Միկրոպրոցեսորի «խաղը» դրա շահագործման համակարգն է: Համակարգչի կառավարման հենց այդ համակարգն է, որ մեքենային տալիս է իրական ինքնությունը: Արդ, IBM-ը երբեք չի կարողացել ստեղծել շահագործման իսկական մի համակարգ: Նրա մեքենաներն ամբողջովին կախված են միկրոհամակարգիչների աշխարհի խոշորագույն ծրագրավորողներից՝ «Microsoft»-ից: Նույն վիճակում են նաեւ «համատեղելի» կոչված բոլոր մեքենաները: Փաստորեն Apple-ը աշխարհում միակ արտադրողն է, որն ունի սեփական շահագործման համակարգը, եւ դա նրան լիակատար ազատություն է տալիս: IBM-ի եւ «Microsoft»-ի հարաբերությունները վաղուց է, ինչ մթագնած են: Երկու առաջատարներից յուրաքանչյուրն ունի «կայսերական» ուժեղ միտումներ: IBM-ի նախագահը՝ գլխավոր տնօրեն Ջոն Սմիթը, ի վերջո, որոշեց հարել իր նախկին համակարգին, որը «Microsoft»-ից պակաս զորեղ է, բայց առավել ստեղծագործ:

Դաշինքի այդ փոփոխությունն այնպիսին է, որ դա խորապես կփոխի առանց այդ էլ շատ խախտված մի արդյունաբերական ճյուղ: Apple-ը եւ IBM-ը նաեւ հայտարարել են, թե իրենք ստեղծելու են մի նոր ընկերություն, որն իրենց կողատկանի հավասարապես եւ որը կիրագործի մի նոր շահագործման համակարգ եւ մի ամբողջ շարք ծրագրեր, որոնք «Macintosh» եւ IBM-ներին թույլ կտան ազատորեն փոխհաղորդակցվել, օգտագործել միեւնույն ծրագրերը:

Միությունը անամպ չի լինի. Apple-ի եւ IBM-ի մշակութային եւ տեխնոլոգիական անցյալը շատ տարբեր են: Կարող են տարբեր բախումներ լինել: Կարելի է սպասել զորավոր «Microsoft»-ի եւ նրա բնական դաշնակիցների դիմադրությանը, որոնք համակարգիչ արտադրողների մեծամասնությունն են կազմում եւ որոնց, ի դեպ, հնարավորություն է ընձեռված վճարով միավորելու Apple-ի եւ IBM-ի շահագործման համակարգերը: Դրանցից է մասնավորապես «Sony»-ն, որն արդեն Apple-ի դաշնակիցն է: Բայց, համենայն դեպս, հիմնական օգտվողը հայտնի է: Նա ի վերջո կդադարի իրեն հարգեր տալ իր ծրագրերի համատեղելիության շուրջը: Եւ, մանավանդ, կկարողանա իր համակարգիչը իրոք օգտագործել դյուրությամբ: Հենց դա է առաջընթացը:

«Լը Մոնդ», 26 հուլիս 1991

ՄԱՐԶԱԿԱՆ

Առայժմ առանց հանդիսականի

«Արարատ»-«Դինամո» (Մոսկվա)՝ 1:1 (1:0)

Աբովյան, 3 օգոստոսի, 0 հանդիսական: Գնդակները խփեցին Կ. Մարկոսյանը եւ Ի. Կոլիվանովը:

Այս հանդիպման արդյունքն արդեն հայտնի է մարզասերներին: Խոսքս առաջին հերթին նրա բովանդակության մասին է: Եւ դեռ լավ է, որ խաղն անցկացվեց առանց հանդիսատեսի: Չեմ կարծում, որ նույնիսկ ի պաշտոնե հանդիպմանը ներկա գտնված որեւէ ականատես գոհունակությամբ հեռացած լինի մարզադաշտից: Ամենալավ է խոսքը տանք ԽՍՀՄ Ֆուտբոլի Ֆեդերացիայի նախագահի առաջին տեղակալ, ԽՍՀՄ վաստակավոր մարզիչ, սպորտի վաստակավոր վարպետ Նիկիտա Սիմոնյանին. *«Խորհրդային առաջնություններում առաջին դեպքն է, երբ հանդիպումն անցկացվում է առանց հանդիսատեսի: Ես չեմ ուզում մեկնաբանել խաղի ընթացքը: Երեւում է ոչ-ոքի արդյունքը բավարարում էր կողմերին: Հավանաբար դա է պատճառը, որ այն անցավ հանգիստ տեմպով: Ինձ առավել մտահոգում էր հանդիպման կազմակերպչական կողմը: Փաստ ասած, ամեն ինչ բարեհաջող եղավ: Երեւում է շատերը գիտակցությամբ են ընկալել ԽՍՀՄ Ֆուտբոլի Ֆեդերացիայի կարգադրական հանձնաժողովի որոշումը: Նույնիսկ նրանք, ովքեր նստել էին մարզադաշտի տարածքից դուրս գտնվող սարալանջին, մեծ գոհունակություն դրսեւորեցին:*

Ես կուզենայի շնորհակալություն հայտնել բոլոր նրանց, ում ջանքերով կարգուկանոն հաստատվեց թե՛ մարզադաշտում եւ թե՛ նրա սահմաններից դուրս: Համբերություն եմ ցանկանում ֆուտբոլասերներին: Եւս 2 խաղ եւ կրկին կարելի կլինի սիրելի թիմի համար ցավել մեծ նվիրվածությամբ, բայց առանց ավելորդ կրքերի»:

Այսօր Աբովյանի քաղաքային մարզադաշտում առանց հանդիսականի հերթական հանդիպումն է: «Արարատ»ն ընդունելու է Զատորոժիեի «Մեսալուրգ»ին: ■

Բարձրագույն խումբ

	Ընդամենը						Տնային դաշտում						Արտաքին դաշտում					
	խ	հ	ո	պ	գ	մ	խ	հ	ո	պ	գ	մ	խ	հ	ո	պ	գ	մ
1. ԲԿՄՍ	21	12	6	3	43-24	30	11	9	0	2	31-13	18	10	3	6	1	12-11	12
2. Սպարտակ Մ.	22	12	6	4	36-22	30	11	8	2	1	20-8	18	11	4	4	3	16-14	12
3. Տորպեդո	22	9	9	4	28-14	27	11	5	3	3	13-6	13	11	4	6	1	15-8	14
4. Դինամո Կ.	22	9	8	5	31-24	26	11	5	4	2	18-13	14	11	4	4	3	12-11	12
5. Դինամո Մն.	22	8	8	6	23-19	24	11	6	4	1	15-7	16	11	2	4	5	8-12	8
6. Շախտյոր	21	6	12	3	26-22	24	11	5	5	1	15-8	15	10	1	7	2	11-14	9
7. Դնեպր	22	7	9	6	19-20	23	11	5	5	1	13-8	15	11	2	4	5	6-12	8
8. Չերնոմորեց	21	4	14	3	25-19	22	10	2	6	2	11-8	10	11	2	8	1	14-11	12
9. Դինամո Մ.	22	8	5	9	27-26	21	12	6	4	2	21-13	16	10	2	1	7	6-13	5
10. Պամիր	22	4	11	7	17-24	19	11	4	6	1	13-10	14	11	0	5	6	4-14	5
11. Արարատ	20	7	4	9	17-21	18	10	6	3	1	11-5	15	10	1	1	8	6-16	3
12. Պախտակոր	21	5	6	10	25-33	16	10	4	5	1	14-8	13	11	1	1	9	11-25	3
13. Մեսալուրգ	21	5	6	10	13-24	16	11	5	4	2	12-8	14	10	0	2	8	1-16	2
14. Մեսալիա	21	4	8	9	18-28	16	11	3	4	4	11-11	10	10	1	4	5	7-17	6
15. Լոկոմոտիվ	21	5	5	11	16-34	15	9	5	2	2	10-5	12	12	0	3	9	6-29	3
16. Սպարտակ Վ.	21	4	7	10	23-33	15	10	3	5	2	15-13	11	11	1	2	8	8-20	4

Առաջին խումբ
«Կոտայք»-«Ռադիոտեխնիկ» (Վլադիմիրովկա) 3 : 0

Բարձրը վարում է Սուրեն ԲԱԴԱՍՅԱՆԸ

digitised by A.R.A.R.@

Վրաստանն ընդունեց մամուլի մասին օրենքը

Ուրբաթ, օգոստոսի 2-ին, Վրաստանի Գերագույն խորհրդի նստաշրջանում ընդունվեց մամուլի եւ զանգվածային լրատվության միջոցների մասին օրենքը: Ինչպես հաղորդում է «ԻՏ»-ի թղթակիցը, օրենքը թույլ չի տալիս քերթերի, ամսագրերի, հեռուստառադիո հաղորդումների, կինոտեսաֆիլմերի գրաքննություն:

Նույն օրը հանրապետության Գերագույն խորհուրդը առաջին ընթերցմամբ ընդունեց քաղաքացիների քաղաքական միավորումների, պետական ձեռնարկությունների մասին օրենքները:

«Քաղաքացիների քաղաքական միավորումների» մասին օրենքի նախագծի համաձայն Վրաստանի քաղաքացին իրավունք ունի լինել միայն մեկ քաղաքական կազմակերպության անդամ: Իրավապահ մարմինների, ՊԱԿ-ի, Ազգային գվարդիայի, դատախազության, միջնորդական դատարանի աշխատակիցները, արդարադատության նախարարության եւ մասնաճյուղերն իրավունք չունեն լինել քաղաքական կուսակցությունների եւ միավորումների կազմում: Օրենքի նախագծում հատուկ կանխադրույթ է դրվում, որ Վրաստանի տարածքում *«գործելու իրավունք չունեն արտերկրի կուսակցությունները, ինչպես նաեւ այն կուսակցությունները, որոնց գործունեությունը կարող է ուղղված լինել Վրաստանի Հանրապետության սահմանադրության, տարածքային ամբողջականության եւ անվտանգության դեմ»*: *«Պետական ձեռնարկությունների սեփականաշնորհման»* մասին օրենքի նախագծով նախատեսվում է հանրապետությունում ստեղծել պետական ունեցվածքի հարցերով զբաղվող կոմիտե, որի իրավասության տակ կլինեն սեփականաշնորհման գործընթացն իրականացնող եւ վերահսկող հարցերը: Վրացական խորհրդարանը քննարկեց եւ ընդունեց մի շարք տնտեսական օրենքներ ազգային բանկի, դրամավարկային կայունացման, հանրապետության բանկերի եւ բանկային գործունեության մասին: Նստաշրջանում ընդունվեց Վրաստանի քրեական օրենսգրքում փոփոխություններ մտցնելու մասին օրենքը:

Զվիադ Գամսախուրդիան Եւրոպա-Ասիա մայրուղու կառուցմանը դեմ է

Օգոստոսի 1-ին Վրաստանի Գերագույն խորհրդում տեղի ունեցավ տարբեր նախարարների եւ գերատեսչությունների ղեկավարների նիստը, որի ժամանակ քննարկվում էր հանրապետության տարածքում Եւրոպայի եւ Ասիայի միջեւ տրանսպորտային ճանապարհը վերականգնելու հարցը: Խոսքը գնում էր ժամանակակից արագընթաց մայրուղու եւ երկաթուղու կառուցման մասին, որի շահագործման համար հանրապետությունը կարող էր եւ վայրուտա ձեռք բերել: Կարծիքները կիսվեցին: Վրաստանի նախագահ Զվիադ Գամսախուրդիան ակտիվորեն հանդես եկավ մայրուղու կառուցման դեմ, իր դիրքորոշումը պատճառաբանելով նրանով, որ հանրապետությունում առանց այդ էլ ստեղծվել է աղետալի բնապահպանական իրավիճակ:

Պահանջում են Աբխազիայի ղեկավարության հրաժարականը

«Միություն» խումբը, որի կազմի մեջ է մտնում Աբխազիայի «Այդգիար» ժողովրդական Ֆրոնտը, ինտերնացիոնալիստների Սուխումի ընկերությունը, Հայկական մշակութային-բարեգործական «Կռունկ» միությունը, Աբխազիայի դեմոկրատական կուսակցությունը, Ռուսական մշակութային միությունը եւ այլն, հանդես եկավ ինքնավար հանրապետության ղեկավարության հրաժարականի պահանջով: «Միությունը» նախազգուշացրեց, որ այդ պահանջը չբավարարելու դեպքում նրանք *«կդիմեն տարբեր գործողությունների»*: Վերջնագրի կապակցությամբ հայտարարությամբ հանդես եկավ Աբխազիայի ներքին գործերի նախարար Գիվի Լոմինաձեն: Նա կարծիք հայտնեց, որ *«Միության» գործողություններն ուղղված են վրացիների եւ աբխազների միջեւ ընդհարումներ հրահրելուն»*: ■

Թուրք-մեսխեթների պատվիրակությունը վերադարձավ Թբիլիսիից

Ուրբաթ օրը Թբիլիսիից Մոսկվա վերադարձավ թուրք-մեսխեթների «Վաթան» ընկերության պատվիրակությունը: Ինչպես հայտարարեց ընկերության վարչության անդամ Այիք Աբասովը, թուրք-մեսխեթների հարցերով Վրաստանի Գերագույն խորհրդի հանձնաժողովն առաջարկում է սկսել մեսխեթական հարցի լուծման գործընթացը եւ Մոսկվայում ստեղծել շահագրգռված այն միութենական հանրապետությունների ղեկավարներից բաղկացած կոմիտե, ուր ընկվում են թուրք-մեսխեթներ: *«Վրաստանում մեզ ասում են, թե հասկանում են մեր հարցերը, սակայն Վրաստանը դեռ կախված է Մոսկվայից, եւ նախ պետք է հասնի իր սեփական անկախությանը, իսկ հետո նոր լուծի մյուս ժողովուրդների խնդիրները»*,- ասաց Այիք Աբասովը:

Ընկերության ղեկավարության կարծիքով, վրացական կողմն անում է ամեն ինչ, որպեսզի ձգձգի մեսխեթական հարցի լուծումը:

Մինչդեռ, ինչպես հայտարարեց թուրք-մեսխեթների «Վաթան» ընկերության վարչության անդամ Աբբաս Ասլանովը, նրա մարդիկ մեծ հույս են դնում Ռուսաստանի եւ Միության ղեկավարների հանդիպումների վրա:

Ասլանովը հաղորդեց Բորիս Ելցինի հետ հավանական հանդիպման մասին, որը կկայանա երկուշաբթի: Ռուսաստանի նախագահի մամուլի ծառայությունը, ընդհանուր առմամբ, չբացառեց այդպիսի հանդիպման հավանականությունը, սակայն հայտարարեց, որ երկուշաբթի նմանատիպ հանդիպում չի նախատեսվում:

Ասլանովի խոսքերով, ԽՍՀՄ նախագահ Միխայիլ Գորբաչովը վկայակոչեց իր զբաղվածությունը, բայց փոխնախագահ Գենադի Յանաեւը կարծես թե դեմ չէ նման հանդիպմանը:

«Եթե Ռուսաստանի եւ Միության ղեկավարներն աջակցեն մեսխեթական հարցով շահագրգռված հանրապետությունների ղեկավարների հանդիպման գաղափարին, Վրաստանը կընդունի ավելի շինիչ դիրքորոշում»,- կարծում է Աբբաս Ասլանովը: Վրաց ղեկավարությունը թուրք-մեսխեթների վերադարձը կապում է հանրապետության անկախության հասնելու հետ: Այդ կապը թուրք-մեսխեթների կողմից ընդունվում է որպես պատրվակ:

Իսկ առայժմ «Վաթան» ընկերությունը հրաժարվեց անցկացնել հանրահավաքներ եւ Մոսկվա-Մեսխեթիա երթը, հույս ունենալով, որ մայրաքաղաքում տեղի ունեցող բանակցություններն արդյունավետ կավարտվեն: ■

Մոսկվայում տեղի կունենա Համաշխարհային տնտեսական ֆորումի հանդիպումը

Սեպտեմբերի 5-7-ին Մոսկվայում տեղի կունենա Համաշխարհային տնտեսական ֆորումի (ՀՏՖ) հանդիպումը *«ԽՍՀՄ. նոր մրցակիցը»* նշանաբանով, որին կմասնակցեն օտարերկրյա ավելի քան 150 տնտեսագետներ: Հանդիպման ժամանակ կքննարկվեն վալյուտային-ֆինանսական եւ առեւտրատնտեսական կարեւորագույն խնդիրներ, կապված ԽՍՀՄ-ի միջազգային տնտեսական ասպարեզ մտնելու հետ: Հատուկ ուշադրություն կդարձվի Միխայիլ Գորբաչովի եւ «մեծ յոթնյակի» երկրների ղեկավարների միջեւ Լոնդոնում տեղի ունեցած բանակցությունների արդյունքներին:

ՀՏՖ-ը ազդեցիկ միջազգային ոչ կառավարական կազմակերպություն է, որը համախմբում է աշխարհի տարբեր երկրների պետական, քաղաքական գործիչներին, խոշոր բիզնեսմեններին եւ հայտնի տնտեսագետներին: ■

Վրաստանը «քայլ առ քայլ» գնում է դեպի անկախություն

Վրաստանի արտաքին գործերի նախարար Գեորգի Խոցտարիան հայտարարեց «ԻՏ»-ին տված հարցազրույցում, որ հանրապետությունը «քայլ առ քայլ» գնում է դեպի անկախություն: Հիմա, ըստ նրա, Վրաստանը գտնվում է անցումային ժամանակաշրջանում:

Գ. Խոցտարիան նշեց, որ Վրաստանը ծրագրում է մտցնել սեփական վալյուտա, հիմնադրել բանկ, ստեղծել մաքսային ծառայություն, վերահսկել սահմանները: Սակայն այս ամենը կկիրառվի ըստ փուլերի, նշեց նա:

Պատասխանելով Մոսկվայի եւ Վրաստանի միջեւ հավանական բանակցությունների ժամկետների վերաբերյալ հարցին, Գ. Խոցտարիան ընդգծեց կենտրոնի հետ երկխոսություն վարելու հանրապետության ցանկությունը: Միաժամանակ նա վկայակոչեց հուլիսի 30-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդին ուղղված Վրաստանի խորհրդարանի որոշումը, որով հաստատվում է Վրաստանի կողմից ավելի վաղ արտահայտված ԽՍՀՄ ղեկավարության հետ բանակցություններ վարելու պատրաստակամությունը:

Խոսելով Հայաստանի եւ Ադրբեջանի հետ Վրաստանի փոխհարաբերությունների մասին, Վրաստանի արտաքին գործերի նախարարը նշեց, որ դրանց գլխավոր նպատակն է կայունացնել իրավիճակը ամենալարված շրջաններից մեկում: Ըստ նրա, երկու հանրապետությունների հետ կնքված պայմանագրերը առաջին քայլերն են այդ ճանապարհին: ■

Միջին Ասիայի հայերն ու ադրբեջանցիները մեղադրում են

Տաշքենդի հայ եւ ադրբեջանական համայնքների ղեկավարներն Ուզբեկստանում ապրող իրենց հայրենակիցների կողմից բաց նամակով դիմեցին Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահ Լեւոն-Տեր Պետրոսյանին եւ Ադրբեջանի նախագահ Այազ Մութալիբովին: Նամակում ասվում է, որ Ուզբեկստանի հայ եւ ադրբեջանական բնակչությունը աղքատ են, թե ինչպես երկու հանրապետությունների խորհրդարանները անտարբեր նայում են իրենց քաղաքացիների տանջանքներին ու տառապանքներին, չեն տեսնում իրենց հանրապետություններից դուրս գտնվող հայ եւ ադրբեջանցի հազարավոր փախստականների ծանր իրավիճակը, զբաղվում են ինքնարդարացմամբ եւ մեղադրանքներով: Նամակի հեղինակները համառորեն խնդրում են հանրապետությունների ղեկավարներին դրսեւորել իմաստություն եւ քաջություն, ձեռնարկել կոնստրուկտիվ, ընդառաջ քայլեր, դադարեցնել բռնության ծավալումը, խնդիրները լուծել քաղաքական մեթոդներով:

Կասպիականը սպառնում է «Նավթային քարերին»

Այն խնդիրները, որոնք 30 տարի առաջ Բաքվից 100 կմ հեռու, Կասպից ծովում գտնվող նավթահանքերի արհեստական կղզու՝ «Նավթային քարերի» շինարարները հաշվի չէին առել, սպիտված են լուծել այսօր, Կասպիականի ջրերի կտրուկ բարձրացման պատճառով: Վերջին տասնամյակում ծովի մակարդակը 1,5 մետրով բարձրացել է:

Ջուրը ծփում է արդեն ցցաթմբերին, լվանում ասֆալտի տակի շերտերը, ողողում վերջին փողոցները: Վարչական շենքերն ու արտադրամասերը դարձել են կղզյակներ:

Առայժմ Կասպիականի նավթահանքերը աշխատում են սովորական ռիթմով: Սակայն նրանք տագնապով են սպասում աշնանը, երբ տարեկան 200 օր փոթորկող ծովը ցույց կտա իր կտրուկ բնավորությունը:

«Կասպծովնավթգազի» ղեկավարների տվյալներով, խանմեկերորդ դարի առաջին տասնամյակում աղասվում է ծովի մակարդակի բարձրացում 3-4 մետրով, որը աշխարհի ամենամեծ լճի առափնյա բնակիչների համար կդառնա ողբերգություն:

Հեյդար Ալիեւ. «Եթե ես նրանց չդիմչեի...»

«ԻՏ»-ի թղթակցին Ադրբեջանի Գերագույն խորհրդում չհաջողվեց հստակեցնել իմանալ՝ ստեղծվե՞լ է արդյոք Հեյդար Ալիեւի կառավարման ժամանակ հանրապետության ղեկավարության գործունեությունը հետաքննող հատուկ պառլամենտական հանձնաժողով: Ինչպես հայտնի է, հուլիսին Հ. Ալիեւը դուրս է եկել կոմկուսի շարքերից: Դրանից հետո Ադրբեջանի կուսակցական եւ պետական կառուցվածքներում նրա դեմ արշավ է ծավալվել: Մեկնաբանելով այդ փաստը, Հ. Ալիեւն ասաց, որ Ադրբեջանի կոմկուսի հաշվառումից դուրս է եկել դեռ 1982 թ., իսկ պետական մարմիններում երբեք չի աշխատել:

Նա հիշեցրեց, որ կոմկուսի շարքերից դուրս գալու կապակցությամբ արած հայտարարության մեջ նա մեղադրում էր Ադրբեջանի կոմկուսին 1989 թ. հուվարին Բաքվում տեղի ունեցած ողբերգության, ԼՂԻՄ-ի շուրջը մարտի 17-ին լարված իրավիճակ պահպանելու եւ հանրաքվեի արդյունքները կեղծելու մեջ:

«Եթե ես նրանց չդիմչեի, հավանական է, որ նրանք փոքր-ինչ հանգիստ կվերաբերվեին ԽՄԿԿ շարքերից իմ դուրս գալուն»,- ասաց Հ. Ալիեւը:

Ադրբեջանի կոմկուսի վերստուգիչ հանձնաժողովի հետաքննությունն սկսելու մասին որոշման կապակցությամբ Հ. Ալիեւը հայտարարեց. *«Նրանք չեն հասկանում, որ կուսակցությունում ամենամեծ պատիժը կուսակցությունից հեռացնելն է, իսկ ես արդեն դուրս եմ եկել»*:

Իրանա-ադրբեջանական նոր պայմանագիր

Իրանի իսլամական հանրապետության «Մոսքազաֆան եւ Ջանքազան» («Կեղեքյալների եւ պատերազմի հաշմանդամների») հիմնադրամը նոր պայմանագիր է կնքել Խ. Ադրբեջանի հետ: Հիմնադրամը, որ երկրի ամենահարուստ պետական կառուցվածքներից է, տարեկան 40-50 միլիոն դոլար է հատկացնելու պայմանագրային պարտավորությունների համար: Միջոցներն օգտագործվելու են տուրիզմի զարգացման, համատեղ տնտեսական եւ առեւտրական ձեռնարկությունների ստեղծման, ինչպես նաեւ Բաքվում մի մեծ հյուրանոցի կառուցման համար: Գ. Ս.

Ելենա Բոնները հիասթափված է

Ակադեմիկոս Սախարովի այրին՝ հայտնի իրավապաշտպան Ելենա Բոնները «ԻՏ»-ի Լենինգրադի թղթակցին տված հարցազրույցում հայտարարեց, թե ընկճված է վերջին խորհրդա-ամերիկյան բարձր մակարդակի հանդիպման արդյունքներից, բացառությամբ ռազմավարական հարձակողական սպառազինությունների կրճատման մասին պայմանագրից: Նա նշեց, որ նախագահ Բուշն ըստ էության դարձել է *«Միջուկենական պայմանագրի գաղափարների պրոպագանդիստը»*:

«Եթե Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինն ստորագրի Միջուկենական պայմանագիրը ռուսաստանցիների թիկունքում, առանց բաց քննարկումների, նա դրանով իսկ կկատարի բոնի հակադեմոկրատական գործողություն»,- նշեց Ե. Բոնները:

Խոսելով աշնանը Մոսկվայում կայանալիք մարդու իրավունքներին նվիրված խորհրդակցության մասին, Բոններն նշեց, որ *«անհրաժեշտ է դեռ լուծել բարոյական հարցը՝ անցկացնե՞լ այն, թե՞ ոչ, երբ երկրում արյուն է թափվում»*:

Բոններն կարծիքով, ԽՍՀՄ-ից անկախանալու իրական հնարավորություններ ունի Ադրբեջանը, *«քանի որ այն ունի բավականաչափ հումքային բազա եւ զենքի շուկա»*: Դա, նրա խոսքերով, *«թույլ կտա Ադրբեջանի ժողովրդին ոչ պառլամենտական միջոցներով հասնել իր ազատությանը»*: ■

Մոսկվայում տեղի կունենա Համաշխարհային տնտեսական ֆորումի հանդիպումը

Սեպտեմբերի 5-7-ին Մոսկվայում տեղի կունենա Համաշխարհային տնտեսական ֆորումի (ՀՏՖ) հանդիպումը *«ԽՍՀՄ. նոր մրցակիցը»* նշանաբանով, որին կմասնակցեն օտարերկրյա ավելի քան 150 տնտեսագետներ: Հանդիպման ժամանակ կքննարկվեն վալյուտային-ֆինանսական եւ առեւտրատնտեսական կարեւորագույն խնդիրներ, կապված ԽՍՀՄ-ի միջազգային տնտեսական ասպարեզ մտնելու հետ: Հատուկ ուշադրություն կդարձվի Միխայիլ Գորբաչովի եւ «մեծ յոթնյակի» երկրների ղեկավարների միջեւ Լոնդոնում տեղի ունեցած բանակցությունների արդյունքներին:

ՀՏՖ-ը ազդեցիկ միջազգային ոչ կառավարական կազմակերպություն է, որը համախմբում է աշխարհի տարբեր երկրների պետական, քաղաքական գործիչներին, խոշոր բիզնեսմեններին եւ հայտնի տնտեսագետներին: ■

Վրաստանը «քայլ առ քայլ» գնում է դեպի անկախություն

Վրաստանի արտաքին գործերի նախարար Գեորգի Խոցտարիան հայտարարեց «ԻՏ»-ին տված հարցազրույցում, որ հանրապետությունը «քայլ առ քայլ» գնում է դեպի անկախություն: Հիմա, ըստ նրա, Վրաստանը գտնվում է անցումային ժամանակաշրջանում:

Գ. Խոցտարիան նշեց, որ Վրաստանը ծրագրում է մտցնել սեփական վալյուտա, հիմնադրել բանկ, ստեղծել մաքսային ծառայություն, վերահսկել սահմանները: Սակայն այս ամենը կկիրառվի ըստ փուլերի, նշեց նա:

Պատասխանելով Մոսկվայի եւ Վրաստանի միջեւ հավանական բանակցությունների ժամկետների վերաբերյալ հարցին, Գ. Խոցտարիան ընդգծեց կենտրոնի հետ երկխոսություն վարելու հանրապետության ցանկությունը: Միաժամանակ նա վկայակոչեց հուլիսի 30-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդին ուղղված Վրաստանի խորհրդարանի որոշումը, որով հաստատվում է Վրաստանի կողմից ավելի վաղ արտահայտված ԽՍՀՄ ղեկավարության հետ բանակցություններ վարելու պատրաստակամությունը:

Խոսելով Հայաստանի եւ Ադրբեջանի հետ Վրաստանի փոխհարաբերությունների մասին, Վրաստանի արտաքին գործերի նախարարը նշեց, որ դրանց գլխավոր նպատակն է կայունացնել իրավիճակը ամենալարված շրջաններից մեկում: Ըստ նրա, երկու հանրապետությունների հետ կնքված պայմանագրերը առաջին քայլերն են այդ ճանապարհին: ■

Հրեական Ինքնավար Մարզի կարգավիճակը հարցականի տակ է

Հրեական Ինքնավար Մարզի կարգավիճակը կարող է հարցականի տակ դրվել, եթե առաջիկա 2-3 տարիների ընթացքում պահպանվեն այնտեղից հեռանալու այժմյան տեմպերը:

Այսօր մարզում ապրում է մոտ 10 հազար հրեա, իսկ բնակչության հիմնական մասն են կազմում ռուսները, ուկրաինացիները, բելոռուսները:

Ստեղծված իրավիճակով անհանգստացած մարզի ղեկավարությունը ձեռնարկում է հուսահատ քայլեր՝ ինչ-ինչ կերպ լավացնելու մնացած հրեաների կյանքը:

Այդ առիթով մեծ հույսեր են կապում Իսրայելի հետ, որ հիմա գտնվում է մարզի պատվիրակությունը՝ մարզխորհրդի նախագահ Բորիս Կորսունսկու գլխավորությամբ: ■

Ամերիկացի ռաբբին ասում է, որ հրեաները Ադրբեջանում լավ են ապրում

Ադրբեջանում հրեաների համար ստեղծված են ամենաբարենպաստ պայմանները, այսպիսի եզրակացության է եկել Բալթիմորի ռաբբի Մոյշա Այզերմանը: Նա ԱՄՆ-ից ժամանել էր ԽՍՀՄ քարոզչական առաքելությամբ եւ արդեն եղել է Մոլդովայում եւ Վրաստանում:

Ադրբեջանում նա այցելեց Կրասնայա Սլոբոդա, հանրապետության Քուբայի շրջանում գտնվող այն վայրը, որ համահավաք ապրում են լեռնային հրեաները: ■

Միջադեպ Կարմիր հրապարակում

Երեքշաբթի Մոսկվայի Կարմիր հրապարակում, Դամբարանի մոտ միլիցիայի աշխատակիցները ձերբակալեցին 1956թ. ծնված, Վիննիցայի մարզի բնակիչ ոմն Ի. Մուսմանին: Նա պատսպառ էր բարձրացրել հետեւյալ կարգախոսով. «Լենին, մենք Վիննիցայի մարզից ենք: Եկել ենք զոհվելու քո գաղափարների համար: Հայտարարում ենք հացադուլ»:

Ինչպես հաղորդեցին «ԻՏ»-ին ԽՍՀՄ ՆԳՆ մամլո կենտրոնում, Ի. Մուսմանի հետ էին նրա երկու դուստրերը՝ 1985 եւ 1987 թթ. ծնված: ■

Ուկրաինայի նախագահության ՌՈՒԽ-ի թեկնածուն

ՌՈՒԽ-ի կենտրոնական ղեկավարող մարմինը Լվովի մարզխորհրդի նախագահ Վյաչեսլավ Չեռնովոլին առաջարկեց Ուկրաինայի նախագահության թեկնածու: Միեւնույն ժամանակ պատսպառվեց մի շարք կուսակցությունների այն առաջարկությունը, որ անհրաժեշտ է առաջադրել մեկ թեկնածու բոլոր դեմոկրատական ուժերի կողմից: Այդ կապակցությամբ օգոստոսի 20-ին նախատեսվում է անցկացնել բոլոր ընդդիմադիր կուսակցությունների եւ շարժումների ներկայացուցիչների հավաք դեմոկրատական դաշինք ստեղծելու եւ նախագահական միասնական թեկնածու որոշելու նպատակով: ■

Լուրերը interfax-ի եւ մեր սեփ. թղթակիցների

Azg semi-weekly, 47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 375010
phone: 58-1841, fax: (8-852)56-2941, telex: 243267 SULA SU

Խմբագիր Յ. ԱՎԵՏԻՔԵԱՆ
Editor H. AVEDIKIAN

Դասիչ 69149

Macintosh համակարգչային շարուածքը Ռ.Ա.Կ. մամլոյ եւ տեղեկատուության կենտրոնի

digitised by A.R.A.R.@